ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1949 *Общественные науки*

Ս. Բալայան

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՔԱՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Արաբական տիրապետության թուլացման հետևանքով, Հայաստանում, 9—10-րդ դարերում, հիմնվում են դրեթէ տեղական ընույթ կրող մի քանի հայ՝ Բագրատունիների, Արծրունիների և Սյունյաց թագավորական իշխանությունները։

Սրանցից անպայման մեծ դեր կատարեց հատկապես Բագրատունյաց հարստությունը, հիմնված՝ 875 թվին։

Սակայն Ատրպատականի մահմեդական էմիրությունը, որը ժամանակի ընթացքում դրեթե անկախ վիճակի էր հասել, աշխատում է ամեն կերպ խոչընդոտներ հարուցանել Բագրատունի իշխանության դեմ։ Այդ էմիրության գլխավոր ներկայացուցիչները՝ Ափշինն ու նրա եղբայր Յուսուֆը իրենց նպատակին հասնելու համար օգտագործեցին նաև Արծրունյաց նախարարությունը, որի տիրապետությունը, ինչպես հայտնի է, տարածվում էր Վասպուրական նահանգի վրա։

Վասպուրականը հին Հայաստանի հարավ-արևելյան նշանավոր նահանգներից մեկն էր, և բավականին հեռու էր գտնվում Բագրատունիների տիրապետության շրջաններից, հատկապես Շիրակից. սրանց միջև ընկնում էին Ռշտունիքում, Առբերանիում և Դնունիքում ստեղծված Պայսիկների և Ութմանիկների մահմեդական էմիրությունները։

Արծրունյաց նախարարությունը Բուղայի արշավանքից հետո սկսեց ինքնագլուխ դառնալու ձգտումներ հայտարերել։ Այդ ձգտումների առաջին արտահայտիչը եղավ Դրիգոր Դերենիկը (858- 886), որ խոշոր ջանքեր գործադրեց իր իշխանությունը տարածելու դեպի Գարսկահայք ու Ատրպատական և այս ձգտումներին էլ դոհ դարձավ։ Դրիգոր Դերենիկի երկրորդ որդին՝ Դադիկը անկախ դառնալու առավել մեծ ջանքեր գործադրեց, և այդ պատճառով իսկ, ընդհարումներ ունեցավ իր մորեղբոր՝ Բագրատունի Սմբատ Ա թագավորի հետ։

Ատրպատականի էմիր Յուսուֆը, որ մահացու թշնամին էր Սմբատի, վերջինիս դեմ Դադիկին որպես գործիք ծառայեցնելու նպատակով, Դադիկին թագ և թագավորական պատիվ տվեց՝ 908 թվականին։

Այսպես սերեն, Վասպուրականում հիմք դրվեց Արծրունիների թագավորական իշխանության, որի տևողությունը սակայն կարճատև եղավ՝ 908—1021 թ., երբ արևելքից եկող թյուրքական հորդաների զրոհի տակ ընկճվեց, և այլևս չվերականգնվեց։

Արծրունյաց թագավորության հիմնադրի՝ Դադիկի գործունեության մասին ընդարձակ տեղեկություններ ունենք Հովհաննես Դրասխանակերտցի[1] և Թովմա Արծրունի[2] պատմագիրներից։ Խնդիրը փոխվում է սակայն, երբ

1 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։
2 Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887։

հերթը գալիս է Դագիկի հաջորդներին. սրանց մասին հայ ժողովրդի պատմության ցարդ հրատարակված աշխատությունների մեջ կանոնավոր և ընդարձակ տեղեկություններ չկան։ Մինչև անգամ Արծրունիների թագավորությունը հիշվում է միայն այն ժամանակ, երբ նրա այս ու այն ներկայացուցիչը պատահականորեն զորձ է ունենում Բագրատունիների, բյուզանդացիների և կամ շրջապատի մահմեդական էմիրների հետ։ Դագիկի հաջորդներին վերաբերող տեղեկությունները ոչ միայն շատ քիչ են, այլև ցաքուցրիվ զտնվում են մեր պատմագիրների հիշատակարանների և զանազան վիմական արձանագրությունների մեջ։

Իմ հոդվածի նպատակն է ի մի հավաքել վերոհիշյալ բոլոր տեղեկությունները և տալ Դագիկի հաջորդների պատմությունը, որը որպես առաջին փորձ, անկասկած կունենա որոշ թերություններ, որոնք երևան կբերի հետագա քննադատությունը։

Սակայն, նախ քան Դագիկի հաջորդների պատմության անցնելը, ես անհրաժեշտ եմ համարում Դագիկի թագավորության և մահվան տարեթվերի մասին տալ մի քանի բացատրություններ։

Որ թվականին պետք է դնել այդ թագավորության սկզբնավորությունը։ Ժամանակակից Թ. Արծրունի և Հ. Դրասխանակերտցի պատմագիրները այդ տարեթիվը չեն տալիս. բացի այս, և ինչ որ ըստ իս ավելի ընդարձակ է, այդ պատմագիրները Դագիկի թագավորելու պարագաների մասին ունեցած իրենց կարծիքով տարբերվում են իրարից։

Դրասխանակերտցին հայտնում է, որ Ատրպատականի ոստիկան Յուսուֆը Դագիկի հետ ունեցած առաջին տեսակցության ժամանակ իսկ, վերջինիս պարգևատրում է թագով (էջ 209)։ Թովմա Արծրունին սակայն, առաջին տեսակցությունը համարում է բարեկամական մի ակտ և միաբանություն, իսկ թագի և թագավորության մասին ոչինչ չի ասում (էջ 284)։ Ըստ Արծրունու, Դագիկը թագ ստացավ և ամբողջ Հայաստանի վրա թագավոր հայտարարվեց Սմբատ Ա. Բագրատունի թագավորի բռնվելուց, հետևաբար և նրա մահվանից հետո միայն (էջ 285)։՝ Միակ պատմագիրը, թեև ոչ ժամանակակից, որ խնդրի առարկա եղող տարեթվի վերաբերյալ տալիս է հաստատուն տվյալներ, Ասողիկն է, ըստ որի, Դագիկը թագավորելով 29 տարի, մեռել է 943-ին, որով և նրա զահակալության սկիզբն ընկնում է 914 թվականի վերջերին։[2]

Զամչյանը, հիմք ընդունելով Դրասխանակերացու պատմագրությունը, Դագիկի թագավորության սկիզբը դնում է 908 թվականին (Պատմ. Հայոց, բ. էջ 740 741), և որպես բացատրություն, ծանոթությունների մեջ հետևյալն է գրում.

«Ժամանակ սոցա [Արծրունի թագավորների] խառն դնեն պատմիչք, զոր զժուարին է որոշել, և այս մանաւանդ ի սխալագրութենէ գրչաց.

---

1 Թ. Արծրունին Սմբատի մահվան մասին ոչինչ չի ասում։

2 Ըստ կեղծ Շապուհ Բագրատունու՝ Դագիկ Արումբվանի սպանությունից հետո, «էր Հայոց թուականն ՌՄԿԲ - 913, Եւ տիրեաց Դագիկ տեղապահութեամբ Վասպուրականի» (էջ 76)։ Թեև Դագիկ Արումբվանի սպանությունը ավելի առաջ է տեղի ունեցել, քան հիշյալ թվականը, սակայն վիպագրի այս տեղեկությունը գուցե մի հեռավոր արձագանք լինի Դագիկի թագավորության իսկական ժամանակի մասին, որ համապատասխանում է Ասողիկի տվյալներին, մի տարվա տարբերությամբ միայն։

որպէս յայտնի տեսանի առաւելապէս ի գիրս Ասողկայ, զի դնի անդ դիրք Գ. գլ. 46, այսպէս, Յաւարման աշխարհիս հայոց թագաւորեաց Դաւիթ ի կողմանս Վասպուրականի ամս ԻԹ. վախճանի ի յդր.թուականին» (էջ 1040)։

Այս է ընդամենը Զամչյանի գրածները Արծրունյաց թագավորության սկզբնավորության մասին, որն ի հարկե, չի կարող բավարարել մեզ, որովհետև չի բացատրում այն հանգամանքը, թե Զամչյանը Դրասխանակերտցու ձր տեղեկության վրա հիմնվելով, Դավիթի թագավորելու թվականն ընդունում է 908-ը։

Բարեբախտաբար, Դրասխանակերտցին ունի մի տեղեկություն, որով հնարավոր է որոշել խնդրի առարկա եղող թվականը։ Պատմելով Դավիթի առաջին տեսակցությունը Յուսուֆի հետ և նրանից թագ ստանալը, պատմագիրը հայտնում է, որ մի ժամանակ անց, Դավիթը նորից է գալիս Յուսուֆի մոտ և նրանից երկրորդ անգամ թագ ստանալով, վերադառնում է Վասպուրական, և հաջորդ գարնան՝ իր Գուրգեն եղբոր հետ բանակը վերցրած դարձյալ ներկայացնում է Յուսուֆին, վերջինիս ծրագրած արշավանքներին մասնակցելու համար։ Յուսուֆն, այդ օգնությամբ ուժեղացած, Դավիթի հետ միասին հարձակվում է Սյունիքի վրա և ավերում երկիրը, «յաւուրս տօնի մեծի պասեքի Զատկայ յերեքհարիւրերորդի յիսներորդի ութերորդի շրջագայութեան Թորգոմեան համարոյ»[1] (Դրասխ., էջ 214), որն ըստ Օրմանյանի հանդիպում է 910 թվականի ապրիլ 1-ին («Ազգապատում» Ա, էջ 1030)։

Հետևաբար, եթե նկատի ունենանք վերևում հիշված քաղաքական բոլոր անցուդարձերը, պիտի ընդունենք, որ Դավիթի առաջին տեսակցությունից և թագ ընդունելուց մինչև Սյունիքի վրա կատարված արշավանքը, անցել է մոտավորապես 2 տարի, որով և արդարանում է Զամչյանը, որ Արծրունյաց թագավորության սկզբնավորությունը դնում է 908 թվականին՝ հիմնվելով Դրասխանակերտցու տվյալների վրա, թեև վերջինս, ինչպես ասվեց վերևում, ոչ մի տարեթիվ չի տալիս։

Այժմ քննենք Արծրունու տվյալները։ Վերևը հիշվեց, որ Թ. Արծրունին Դավիթի թագավորության սկիզբը դնում է Սմբատ Ա. Բագրատունի թագավորի մահից հետո, երբ Դավիթը թագ է ստանում նախ Յուսուֆից (էջ 285), և ապա ամիրապետից (էջ 286)։ Ամիրապետից Դավիթի թագ ստանալու տեղեկությունն ունի նաև Դրասխանակերտցին (էջ 306), որ դարձյալ ընդունում է, թե ամիրապետից Դավիթի թագը և թագավորություն ստանալը, այն էլ ամբողջ Հայաստանի վրա, տեղի է ունեցել Սմբատի մահից հետո։ Դրասխանակերտցին այս խնդրի համար ևս տարեթիվ չի տալիս, ըստ Օրբելյանի, Սմբատ Բագրատունու մահվան թվականը՝ հայոց 362[2], և հետևաբար մեր 913 թիվն է։ Զամչյանը, այդ դեպքը դնում է 914-ին (Պատմ. Հայոց, Բ, էջ 757—759), իսկ Օրմանյանը՝ 913-ի դեկտեմբերին, կամ 914 թվի հունվարը։

Այժմ անցնենք Դավիթի մահվան տարեթիվը որոշելուն։ Ինչպես հայտնի է, Դրասխանակերտցին ավելի շուտ է մեռել քան Դավիթ Արծրունին, իսկ

1 Օրմանյանը վերոհիշյալ տեղեկության համար փոխանակ Դրասխանակերտցուց օգտվելու, մեջբերում կատարել է Օրբելյանից, և այն շատ իզուր, որովհետև Օրբելյանի աղբյուրն, ըստ իս, դարձյալ պատմագիր կաթողիկոսն է։

2 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 191։

Թովմա Արծրունու պատմագրության մեջ Դագիկի մահվան մասին ոչինչ կա. Ասողիկն է միայն, որ, ինչպես վերևում ասվեց, Դագիկի մահը գնում է 943-ին։

Զամչյանն ու Օրմանյանը Դագիկի թագավորության սկիզբն 908 թվականը գնելով, և ըստ Ասողիկի՝ նրան 29 տարի թագավորել տալով, մահը գնում են 936-ին (Զամչ., Պատմ. Հայոց, Բ, 826), կամ 937-ին («Ազգապատում» Ա, էջ 1078)։

Ըստ իս, այս հաշիվը ճիշտ չէ, որովհետև երբ Ասողիկը Դագիկին 29 տարի թագավորություն տալով մահը գնում է 943-ին, նշանակում է պատմագիրը թագավորության սկիզբը համարում է ոչ թե 908, այլ 914-ի վերջերը, կամ 915 թվականի սկզբները։ Ասողիկն էլ. Դագիկին պաշտոնապես թագավոր է ճանաչում միայն, նրա (Դագիկի)՝ ամիրապետից թագ և թագավորություն ստանալու կապակցությամբ։

Հետևաբար Դագիկի թագավորություն 908-ից հետո հաշվելով, գտնում է ոչ թե 29, այլ 35 տարի, որը գումարվելով 908-ի վրա, ստանում ենք Դագիկի մահվան իսկական տարեթիվը, ըստ Ասողիկի՝ 943 թվականը։

Ժամանակագրական այս հաշիվներից զուրս, Դագիկի մահվան մոտավոր տարեթիվը որոշելու համար, Արծրունին ունի նաև մի այլ անհերքելի փաստ։ Նա պատմում է, որ երբ Դագիկը Դվինը պաշարեց, նրա հետ էր նաև Եղիսե «սուրբ Հայրապետն Հայոց» (էջ 301), որի կաթողիկոսությունն սկսում է 941 թվին («Ազգապատում», Ա, նյութերի ցանկ, էջ LA)։

Որ Դագիկ Արծրունին ողջ է եղել Եղիշեի կաթողիկոսության առաջին տարիներին, հաստատվում է նաև Սամուել Անեցու հետևյալ խոսքերով.

«ՉԽ (940), Տէր Եղիա[1], ամս է (7)։ ՉԽԱ, ի Տէր Եղիայէն էառ զԱղթամար Դագիկ՝ և ետ նմա զ[illegible][2], շինեաց և կատարեաց անդ զեկեղեցին» (էջ 99)։

---

1 Որն ըստ Օրմանյանի՝ գրչագրական վրիպակ է, պետք է լինի Եղիսե («Ազգապատում» Ա, էջ 1081)։ Ս. Անեցու մի այլ ձեռագիր ևս ունի ուղիղ ձևը՝ Եղիսե (տես Ս. Անեցի, նույն էջ, ծանոթություն 5)։ Ասողիկը գրում է. «... զկնի Տեառն Թեոդորոսի, Տէր Եղիսէ եղբայր նորին՝ ամս է» (էջ 171)։

2 Վանեցի ուղեգիր Մ. Միրախորյանը Ռշտունիքի «Իլու վանք կամ 40 խորան Աստվածածին»-ի մասին հետևյալն է գրում. «... [Աթանաց] գյուղեն բավական հեռու, հովտին մեջ, կա Իլի կոչված հայ գյուղ, ուր 25 տուն բնակիչ կգտնվի, ունին գմբեթավոր հին վանք մի Իլու վանք կամ 40 խորան Աստվածածին կոչված, որ այժմյան յուրյանց եկեղեցին է։ Սույն մենաստանը հանգերձ յուր 40 խորանովն Արծրունի Դագիկ կառուցած է...։ Այսօր ահա այդպիսի անցյալ ունեցող մեծահռչակ մենաստանն զրկված է յուր 40 գեղեցկաշեն խորաններեն, որոնց մի քանիներու հագիվ կնշմարվեն հիմնաքարինք...» (Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, Պոլիս, 1884, հտ. Ա., էջ 114—115)։

Ս. Լալայանը այս վանքը հետևյալ ձևով է նկարագրում.

«Համեմատաբար Քառասուն խորան կոչված Ս. Աստվածածնի վանքը գտնվում է Ռշտունյաց Իլու գյուղում։ Սա բաղկացած է երկու, միմյանց կից տաճարներից, որոնցից հյուսիսայինը գեռևս կանգուն է, իսկ հարավայինը՝ կիսավեր։ Այս տաճարի առանձնահատկությունն այն է, որ նախնական եկեղեցիների նման ունի չորս ավանդատուն, արևելյան և արևմտյան կողմերում երկական, և սրանց վրա դարձյալ չորս այլ ավանդատուն, որոնց դռները դրսից են, բավական բարձր։ Մյուս տաճարը, որ հաղորդակցվում է առաջինի հետ մի դռնով, կիսավեր է... երևում են ներքին չորս ավանդատները, որոնց վրա երեի դարձյալ եղել են ավանդատներ, որ ժողովուրդը չափազանցնելով Քառասուն խորան է կոչել վանքը։ Այս վանքը համարվում է Դագիկ Արծրունու շինված և այժմ [1911 թ.] ծառայում է իբր Իլու գյուղի ծխական եկեղեցի» (Ազգագրական հանդես, № 21, «Վասպուրականի վանքեր», էջ 48—49)։

Ուրեմն, Օրմանյանը իղուր տեղը գրում է հետևյալը. «... ամեն պարագային մեջ բնավ պատմական հանգամանք չունի Եղիշե (Եղիսե) կաթուղիկոսի Դինոյ բլուրին [Դվինի մոտ] վրա աղոթելը, վասնզի Դաղիկը Եղիշեի կաթողիկոսությենեն առաջ վախճանած էր արդեն» («Ազգապատում», էջ 1077)։

Թովման Դաղիկի ժամանակակիցն էր, և նրա հրահանգովն էլ գրել է Արծրունիների պատմությունը, որով և չէր կարող Եղիշե կաթողիկոսի ստահոդ պատմությունն ստեղծել՝ մանավանդ որ դա ոչինչ չէր ավելացնում Դաղիկի արժանիքի վրա։ Եղիշե կաթողիկոսը միայն պատահականորեն է երևում Թովմայի գրքում, Դվինի վրա կատարված արշավանքի կապակցությամբ, իսկ Անեցու տված վկայությունը դալիս է հաստատելու Դաղիկի և Եղիշեի, որոշ տարիների համար, ժամանակակիցներ լինելու վերաբերյալ Թովմայի պատմածները։[1]

Իմ կարծիքով, Դաղիկի մահվան թվականը պիտի ընդունել ըստ Ասողիկի՝ 943-ը։ Այս ուղղությամբ, արժե հիշել, որ Ալիշանն էլ ընդունում է, թե «Դաղիկն վախճանած է 940 թվականեն վերջ...» («Հայապատում», էջ 83)։

Արծրունյաց թագավորության սկզբնավորության և Դաղիկի մահվան տարեթիվի մասին այս մի քանի բացատրություններից հետո, այժմ անցնենք Դաղիկի հաջորդների պատմության։

***

Առաջին պատմագիրը, որին դիմելու ենք Դաղիկի հաջորդների պատմությունը սովորելու համար, դարձյալ Թովմա Արծրունին է, որի պատմագրությունը դժբախտաբար մեզ քիչ կարող է օգնել, որովհետև բնագիր օրինակը պակասավոր է։ Պատմագրության Դ. գլխում Դաղիկ Արծրունու մասին եղած գովասանական ճառը չի վերջանում, թերթերի թափած լինելու պատճառով,- որով և տոհմական պատմագրության մեջ մենք չենք կարող գտնել ոչ Դաղիկի մահվան տարեթիվը, ոչ էլ Դաղիկին հաջորդող իր երկու որդիների՝ Դերենիկի և Արուսանլ-Համազասպի մասին որևէ խոսք։

Նույն Դ. գլխի ԺԻ գլխի հեղինակն էլ դարձյալ իր գրածների որոշ մասին ժամանակակից մարդ չէ, որովհետև գլխի սկզբում՝ Սենեքերիմ և Դերենիկ Արծրունիների պատմության մեջ, մի բառով անգամ չի հիշում Սենեքերիմի հոր՝ Արուսանլ-Համազասպի անունը, չի հիշում Սենեքերիմի եղբայրներին՝ Աշոտին և Դուրգենին, չի ասում, որ Սենեքերիմը և Դուրգենը օգնեցին Բագրատունի թագավոր Աշոտ Գ. Ողորմածին՝ բյուզանդական Զմշկիկ կայսրի դեմ։ Պատմիչը Դուրգենի որդի Դերենիկին համարում է Սենեքերիմի եղբայր, մինչդեռ եղբորորդին է։

Պատմության այս մասի շարունակողը տալիս է հատկապես Սենեքերիմի գաղթից հետո, Վասպուրականում գործող Արծրունի Խեղենիկյան

1 Թովմա Արծրունու Պոլսի հրատարակությունն էլ ընդունում է, որ Եղիշե կաթողիկոսը «... միով ամաւ յառաջ քան զմահ Դաղկայ կալաւ զաթոռ հայրապետութեանն» (Հառաջաբան, էջ 3), թեև այդտեղ թյուրիմացաբար, Դաղիկի մահը գնում են 927-ին։

2 Թովմա Արծրունի, էջ 305, ծանոթություն 1։

Արղլմսեհի և նրա սերնդի համառոտ ցեղաբանությունը, առանց աչքի ընկնող որևէ պատմական դեպքի հիշատակման և նկարագրության։ Պատմիչը Դ. դպրության ԺԲ. գլխում՝ Արղլմսեհին փառաբանում է մի գովասանքով, որ շատ նման է Դաղիկ Արծրունու համար գրված ճառին (ԺԱ. գլխում)։

Որ այս պատմիչը Սենեքերիմին ժամանակակից չէ, հաստատվում է վերջապես նրանով, որ նույն ԺԲ. գլխում հիշում է ՇՀ (1121) թվականը, երբ մեռնում է Արղլմսեհը[1]։

Արդ, եթե ըստ Ուռհայեցու՝ Սենեքերիմի մահը տեղի ունեցած համարենք 1029-ին, այն ժամանակ պարզվում է, որ պատմության այս մասի գրողն ապրել է Սենեքերիմի մահվանից մոտ 100 տարի հետո, և հաղիվ թե Սենեքերիմի կյանքից մի քանի բան՝ հատկապես թուրքերի հարձակումը և Վասպուրականի գաղթն է գրել, այն էլ, խիստ համառոտ և ընդհանուր խոսքերով, որպիսի տեղեկություններ գտնվում են ուրիշ պատմագիրների մոտ ևս։

Տոհմական պատմագրության այս թերությունների պատճառով էլ, Դաղիկի և նրա հաջորդների պատմությունը խիստ պակասավոր ձևով է հասել մեզ։

Դաղիկի հաջորդների մասին եղած տեղեկությունները պատահական կերպով երևում են նաև մյուս հայ պատմագիրների մոտ, երբ Արծրունի իշխողները, այս ու այն դեպքերին մասնակցելու պատճառով՝ արժանանում են հիշատակվելու։

Հայ պատմագիրներից առաջինը՝ Ասողիկն է, որ մի առանձին ցուցակով, Դաղիկից մինչև Սենեքերիմ, Արծրունի թագավորների հաջորդականությունն է տալիս, ավելացնելով դրա վրա նաև մի քանի ծանոթություններ Վասպուրականի կյանքի մասին[2]։

Ասողիկի պատմածներն արժեքավոր են այն գծով, որ եթե չլինեին դրանք, մենք Դաղիկի հաջորդների մասին շատ քիչ բան պիտի իմանային, իսկ հատկապես Դաղիկի երկու որդիներից՝ Դերենիկի անունն անդամ մեզ անծանոթ պիտի մնար, որովհետև, Մատթեոս Ուռհայեցու և Վարգանի կողմից Դաղիկի հաջորդների ցուցակներն, ըստ իս, Ասողիկի ցուցակի արտագրություններն են՝ մի երկու աննշան տարբերություններով։

Ասողիկից հետո, Լաստիվերտցին է, որի Արծրունիների վերաբերյալ պատմությունը բովանդակում է միայն Սեբաստիայում նրանց վարած կյանքի մասին տեղեկություններ[3]։

Դրանից հետո, Սամուել Անեցին է, որ գրում է միայն թուրքերի հարձակման և Սենեքերիմի գաղթի մասին, դարձյալ համառոտ և ընդհանուր բառերով։[4]

Հաջորդ և միակ արժեքավոր պատմագիրը Մատթեոս Ուռհայեցին է, որի ժամանակագրության մեջ մենք գտնում ենք Աբուսահլի հաջորդնե-

1 Թովմա Արծրունու և նրա անանուն շարունակողների մասին կարդալ Նորայր Բյուզանդացու ընդարձակ հոդվածը 1905 թ. «Ազմավեպ»-ի 5, 6 և 7—8 համարներում, որտեղ՝ հեղինակը անանուն պատմիչի դործ է համարում Ի. Արծրունու պատմության էջ 262—305-ը (Ք. Պատկանյանի հրատարակություն), իսկ Դ. դպրության ԺԲ գլուխը համարում է ավելի հնադույն հավելում։

2 Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885։

3 Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912։

4 Սամուելի քահանայի Անեցւոյ հաւաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893։

րից՝ Դուրդենի և Սենեքերիմի մասին տեղեկություններ։ Նա գրում է թուրքերի հարձակումը, Վասպուրականի գաղթը, ինչպես նաև Սեբաստիայում վերաբնակվող հայության և Սենեքերիմի որդիների պատմությունը բավական մանրամասն կերպով։ Ուռհայեցու ժամանակագրությունը բովանդակում է նաև գաղթից հետո Վասպուրականի գրության և հայ ժողովրդի մասին արժեքավոր տվյալներ։[1]

Ուռհայեցու ժամանակագրությունը համառոտագրել է Սմբատ Դունդսաարլը, և այդ իսկ պատճառով առանձին նորություններ չեն ճարվում նրա գրքում։

Վերջին պատմագիրը Վարդանն է, որ խիստ համառոտ կերպով գրում է Դագիկի հաջորդների գեղարանությունը և Վասպուրականի գաղթը Սեբաստիա։[2]

Պատմագիրներից զուրս կան նաև մի քանի հիշատակարաններ և արձանագրություններ, սրանցից ևս օգտվել եմ սույն հոդվածը գրելիս։

* * *

Դագիկի մահվանից հետո, Արծրունիները չավին քիչ թե շատ ուշքի ընկնող ներկայացուցիչ, այդ պատճառով իսկ, Վասպուրականում ծնունդ առած այս իշխանությունը չկարողացավ պահպանել Դագիկի ժամանակվա հզորությունն ու նշանակությունը։ Բացի այս, Ատրպատականի մահմեդական էմիրությունը մշտական վտանգ էր ներկայացնում Արծրունյաց իշխանության համար։

Դեռ 914 թ. մոտերքը Ատրպատականում կազմակերպվում է Դելմիկների իշխանություն, «յորոց գլխաւոր ոմն եկեալ Սաղար անուն. և համաւարած սփոեալ զիւր զգաւազանն, տիրէ Ադուանից, Պարսից և Հայոց, և եկեալ ի Պարտաւ իւրացուցանել զայն իսկոյն» (Մ. Կաղանկատուացի, էջ 385, Թիֆլիս, 1913 թ.)։

Հայտնի է, որ դեռ Դագիկ Արծրունու ողջության՝ (937 թ. ըստ Ն. Բյուզանդացու), Դելմիկները հարձակվում են Վասպուրականի վրա, բայց Անձևացյաց գավառում Դագիկի զորքերը նրանց լավ ջարդ տալով փախցնում են։ Անձևացիքի վրա հարձակվող Դելմիկների այս հատվածը, որ հաստատված էր Պարսկահայքում, սպառնալիքի տակ էր պահում Արծրունիների իշխանությունը։

Դագիկին հաջորդում է նրա որդի Դերենիկը, որի կյանքի և գործունեության մասին, ոչ Ասողիկից, ոչ էլ մի այլ պատմագրից կամ հիշատակարանից որևէ տեղեկություն մեզ չի հասել։ Դերենիկի միայն անունն է նշանակված Ասողիկի տված ցուցակում, ըստ որի, Դերենիկը հաջորդում է իր հոր՝ 943 թվականին և 15 տարի իշխելուց հետո մեռնում է 958 թվին։ (Ասողիկ, էջ 281)։[3]

1 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898։

2 Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861։

3 Ասողիկի բնագրում՝ Դերենիկի թագավորության տարիների թիվը գրված է ԺԷ (17), որն ըստ հրատարակիչների դիտողության, ճիշտ չէ։ Այս սխալն արդյունք է արտագրողների է (7) և ե (5) տառերը իրար հետ չփոթելուց (Ասողիկ, էջ 393, ծանոթություն 146)։

Սակայն Չամչյանը (Պատմություն Հայոց, Բ, էջ 826) և Օրմանյանը («Ազգապատում» Ա, էջ 1083) Դերենիկ Արծրունուն շփոթում են Ուռհայեցու հիշած Դերենիկ «Անձևացյաց թագավորի» հետ,[1] վերջինիս մասին Ուռհայեցու պատմածները վերագրելով Դաղիկի որդի Դերենիկին, առանց ուշ դարձնելու ոչ Անձևացի մականունին և ոչ էլ Ուռհայեցու տված ժամանակագրական թվականներին։

Այս խնդիրը պարզելու համար անհրաժեշտ եմ համարում տալ մի քանի բացատրություններ։ Ամենից առաջ պիտի նկատի ունենալ այն, որ Դաղիկի որդի Դերենիկը Անձևացի չի կոչվել, և չէր էր կարող կոչվել, որովհետև նրա օրերին տակավին Արծրունյաց թագավորությունը մի քանի մասի բաժանված չէ եղել։ Դաղիկի որդին միահեծան տերն ու կառավարիչն է եղել Վասպուրականի։ Ինչպես հետագայում պիտի պատմվի, Արծրունի թագավորության բաժանումը տեղի է ունեցել Արուսահլ-Համազասպի մահից հետո, նրա որդիների՝ Աշոտի, Դուրգենի և Սենեքերիմի միջև։ Դուրգենին բաժին է ընկել Անձևացիքը, որի պատճառով էլ գուցե, նա համարվել է Անձևացի։ Բացի այս, ինչպես գիտենք, ըստ Ուռհայեցու, Դերենիկ Անձևացուն դերում է Արլհաջա մահմեդական էմիրը։ Եթե Դաղիկի որդի Դերենիկը ենթարկված լիներ այդպիսի առևանգման, ապա իմ կարծիքով. Ասողիկը չէր մոռանա հիշատակելու այդ դեպքը։[2]

Դերենիկին հաջորդում է նրա եղբայր Արուսահլ-Համազասպը։[3] Արուսահլի իշխանության օրերին՝ 969 թվականին, նրա մոտն է ապաստանում Անիից, որպես քաղկեդոնիկ հալածված, Վահան կամ Վահանիկ կաթողիկոսը։

«Իսկ Վահանիկն փախստեայ անկանի ի Վասպուրական առ Ապուսահլ թագաւոր Վասպուրականի, որ էր որդի Դաղկայ Արծրունւոյ» (Ասողիկ, էջ 181—182)։ Վահանիկի փոխարեն, Աշոտ Գ Ողորմածի համաձայնությամբ, եկեղեցական ժողովը կաթողիկոս է դնում Սևանի վանական Ստեփանոսին։

Վահանիկը չի ենթարկվում Ստեփանոսին, երկու կաթողիկոսները փոխադարձաբար նզովում են՝ իրար և հակառակորդի համախոհներին։

Այս խռովության վերջ դնելու և Վահանիկին ու Համազասպին հանգիմանելու նպատակով, երկու հայտնի վարդապետների հետ Վասպուրական է գնում Տարոնի եպիսկոպոս Ստեփանոսը։

Արուսահլ-Համազասպը այս մարդկանց ոչ միայն չի ընդունում, այլև աքսորում է Աղթամար կղզին, որտեղից հանելով, Ստեփանոսին բանտարկում է Պոտորի բերդում, իսկ նրա երկու ընկերներին աղատ է արձակում։ Ստեփանոսը մի քանի ժամանակ հետո մեռնում է բանտում։

Քիչ անց, միևնույն տարում, երկու կաթողիկոսներն էլ մահանում են, որով և խռովությունն ինքնին վերանում է երկրից (Ասողիկ, էջ 182)։[4]

---

1 Չամչյանի ցույց տված աղբյուրներից մեկն էլ Կիրակոս Դանձակեցու Պատմությունն է, որի մեջ սակայն ոչինչ չկա գրված Դերենիկի մասին։

2 Դուրգեն և Դերենիկ Անձևացիների մասին խոսք կլինի հետագա էջերում։

3 Ասողիկը, Դերենիկի մահը հիշելուց հետո, առանց նրա հաջորդի՝ Արուսահլ-Համազասպի անունը տալու, գրում է. «Եւ ապա թագաւորեաց Աշոտ որդի Արուսահլի ամս ԻԲ...» (էջ 281)։ Այստեղ անպայման բնագիրը թերի է, որի մասին կարդալ Չամչյան, Բ հատ., էջ 1040—41 և Ասողիկ, էջ 281 և 393, ծանոթություն 145։

4 Այս խնդիրների վերաբերմամբ Ասողիկի բոլորովին պարզ և որոշ տեղեկությունների հակառակ՝ Չամչյանը կատարել է պատմական փաստերի աղավաղում, Տարոնի և արևմտյան հայերի եպիսկոպոս Ստեփանոսի փոխարեն, նորընտիր Ստեփանոս կաթողիկոսին ուղարկելով

Արուսակ-Համազասպի Վահանիկին ասպնջականություն ցույց տալը, ինքնին մի պարզ ապացույց է, որ Արծրունիների մեջ տակավին վառ էր ինքնագլուխ լինելու ցանկությունը, և բավական հզոր էին զգում իրենց՝ Բագրատունիներից անկախ գործելու համար։

Վահանիկի այս միջադեպի պատմությամբ էլ վերջանում է Ասողիկի տեղեկությունները Արուսակի մասին։

Ասողիկից դուրս, տեղեկություններ ունի նաև Պանդալեոն անունով մի քահանա, որ Արուսակ-Համազասպի հրամանով Պոլիս է գնացել սրբերի մասունքներ բերելու համար։ Պանդալեոնն այս առթիվ իր հիշատակարանում գրում է.

«Յամս Նիկեփորայ տիեզերակալի կայսեր Յունաց... եհաս ինձ տառապեալ Պանդալեոն և ոչ ըստ արժանեացն քահանայի... ի հրամանէ երկրորդ տիեզերակալի տեառն իմոյ աւագ Արուսակի Համազասպայ՝ արքաքից արքայի մեծ պետութեանս տանս Հայոց, գնալ... ի Կոստանդնուպոլիս, ի ՆԺԴ (965) թուականութեանս Հայոց...» («Հայապատում», էջ 295 - 296)։

Պանդալեոնի այս հիշատակարանի մեջ, աչքի է ընկնում հատկապես այն հանգամանքը, որ Բագրատունի թագավորների Ստեփանոս պատվանունի փոխարեն, կարծես թե նրանցից ետ չմնալու համար, Արուսակ-Համազասպը կրել է արքայից-արքա տիտղոսը։

Ինչպես վերևում ասվեց, Ասողիկը, Արծրունի թագավորների ցուցակում, Արուսակի անունը չի տալիս, սակայն հրատարակիչները, պատմագրի տված փաստերով իսկ որոշում են Արուսակի իշխանության տարիները՝ 958 -968 թ. թ., այսինքն տաս տարի (Ասողիկ, էջ 393 394, ծանոթ. 146)։

Արուսակի մահվանից հետո, նրան հաջորդում է մեծ որդին Աշոտը, որ ըստ Ասողիկի, 22 տարի (968—990 թ. թ.) միահեծան իշխում է Վասպուրականի վրա, և միայն իր մահվանից հետո, միասին թագավորում են նրա երկու եղբայրները՝ Գուրգենն ու Սենեքերիմը։

Պատմագիրն ասում է.

«Աշոտ... վախճանեցաւ ի ՆԼԹ (990 թ.) թուականին։ Եւ ի միասին թագաւորեցին երկու եղբարք նորա Գուրգէն և Սենեքերիմ, որդիք Արուսակի» (էջ 281)։

Սակայն մի քանի հիշատակարաններից պարզվում է, որ Արուսակի մահվանից հետո, նրա երեք որդիները, որպես թագավոր իշխում են Վասպուրականի այս ու այն մասերում։[1] Թվում է թե Ասողիկն Աշոտին՝ իր

Վահանիկի մոտ, անկասկած նպատակ ունենալով լարձրացնել թաղկեղոնիկ Վահանիկի արժանավորությունը (Պատմություն Հայոց, բ., էջ 841)։ Տարօրինակն այն է, որ Օրմանյանը (Ազգապատում, Ա., էջ 1118—1121), և Աբրահամ Ջամինյանը (Հայոց եկեղեցու պատմություն Ա., էջ 162) հետևել են Ջամչյանի՝ պատմության այս միտումներով աղավաղումին։ Օրմանյանը՝ Ստեփանոս կաթողիկոսի Վահանիկի մոտ գնալը բացատրում է Ստեփանոսի խաղաղասիրությամբ։ Ըստ իս, երեք պատմաբաններն էլ սխալվում են։

Հ. Սուքիաս Էփրիկյանը իր «Վանայ ծովակին կղզիները—Աղթամար» վերնագրով հոդվածաշարքի մեջ, բոլորովին ինձ նման հասկանալով այս խնդիրը, ծանոթագրում է հետևյալը.

«Մեծ Հ. Միքայել Ջամչյան յուր պատմության Բ հատորի 641 էջ, սույն այս Վասպուրական եկող Ստեփանոս վարդապետը կչփոթի ընդ Ստեփանոս Գ Սակաթոռ կաթողիկոսի» («Բազմավեպ», 1897, էջ 517)։

1 Այս տեղեկություններին կանդրադառնանք թիլ հետո։

մեծ եղբոր, համարել է իսկական թագավոր և լռությամբ է անցնում մյուս երկուսի նրա հետ միաժամանակ թագավորելու վրայից։

Նույնանման թյուրիմացության մեջ է նաև Մատթեոս Ուռհայեցին, որ հայտնում է, թե 972 թվականին բյուզանդական Զմշկիկ կայսրին զիմադրելու համար՝ Բագրատունի Աշոտ Գ. Ողորմածին օգնություն են գնում, «Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Դուրգէն Անձևացեաց տէրն»... (Ուռհայեցի, էջ 17)։

Ինչպես տեսնում ենք, Ուռհայեցին էլ, իր հերթին անգիտանում է Աշոտի թագավորելը 968—990 թ. թ. և Վասպուրականի տեր է համարում Սենեքերիմին։ Ուռհայեցու այս պատմածը ավելի շուտ հարմարում է Աշոտի մահվանից հետո եղած Վասպուրականի գրության։

Ուռհայեցին՝ Սենեքերիմից առաջ եղած Արծրունի թագավորների կարգը հետևյալ ձևով է ներկայացնում. «...Եւ [Աշոտ] (Բագրատունի Դաւիկ Ա-ի որդին) գնացեալ առ Սենեքերիմ թագաւորն Վասպուրականի, առ որդին Ապուսահլի՝ որդւոյ Աշոտոյ, որդւոյ Դերենիկանն, որդւոյ Դաւկայ՝ Արծրունի ազգաւ...» (էջ 8)։

Պատմագրի տված այս կարգը սակայն ճիշտ չէ, որովհետև Դերենիկից հետո Աշոտ չի եղել, և Արուսահլը Դաւիկի որդին է և Դերենիկի եղբայրը և ոչ թե վերջինիս թոռը։

Վարդանը՝ ըստ իս, օգտվելով Ասողիկից՝ Վասպուրականի թագավորների հաջորդականության հետևյալ կարգն է տալիս.

«Դաւիկ՝ որդի Դերենիկան, սա շինեաց զԱխթամար, ապա Դերենիկ՝ որդի նորա և զկնի եղբայր Արուսահլ, և յետ նորա Շահնշահ[1] որդի նորա, և զկնի՝ եղբայր նորա Գուրգէն, և ապա եղբայր նորա Սենեքերիմ...» (էջ 124—125, Մոսկվա)։

Ինչպես վերոհիշյալ տողերից պարզվում է, Վարդանն էլ Արուսահլ-համազասպի երեք որդիների միաժամանակ թագավորելը չի իմանում, և Ասողիկից մի քայլ ավելի առաջ գնալով, Աշոտից հետո, թագավոր է նշանակում Գուրգենին, հետո Սենեքերիմին, երևի նկատի ունենալով տարիքի մեծությունը։

Այժմ անցնենք հիշատակարաններին և վիմական արձանագրություններին, հաստատելու համար, որ Գուրգենն ու Սենեքերիմը Աշոտի ողջության օրերին թագավոր են եղել։

Այս ուղղությամբ, առաջին տեղեկությունը տվողը Նարեկացին է, որ «Ապարանից խաչի պատմության» մեջ գրում է.

«Արդ ծաղեաց նորանշոյլ փայլումն սրբոյ նշանիս ի մտից լուսոյ... յաւուրս ունողաց տանս Վասպուրականի՝ եղբարց երից վեհից և հզօրաց հարազատաց, ի յարևնէ արքայից... ի տանէ տերանց...։ Անուն կրտսերոյն զհաւոյն եղեալ՝ Սենեքերիմ մակագրեալ, իսկ միջնոյն՝ Գորգէն, և նախնւոյն Աշոտ։ Բայց ի փրկագործն ծննդենէ աւազանին նորոգութեանս... անդրանկին՝ Սահակ, երկրորդին՝ Խաչիկ, վերջնոյն՝ Յովհաննէս։ Թագաւորեալք և փառաւորեալք ի մի ամանակի՝ արք բարիք և աստուածասէրք...։ Ի թիւս չափոյ քանա-

[1] Աշոտը, իմ կարծիքով, ունեցել է Շահնշահ սիրատոսը, որը Վարդանը գործ է ածել Աշոտ անվան փոխարեն։

- Ընդգծումն իմն է։

կութեան... չորեք հարիւրորդի երեսներորդի երկրորդի (432=983) յաբեթական տոմիս տումարի» (Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 386—387, Վենետիկ, 1840 թ.)։[1]

Սրանից դուրս, Նարեկացին ունի մի այլ ցուցմունք, «Երզ երգոց»-ի մեկնության վերջում հետևյալն ենք կարդում.

«Ի ՆԻԶ (977) թուականութեանս Հայոց՝ հարկեցայ ես Գրիգոր քահանայ ի Նարեկայ, որդի տեառն Խոսրովայ Անձաւացեաց եպիսկոպոսի, ի Գուրգենայ աստուածասէր քրիստոսապսակեալ արքայէ՝ յորդւոյ Արուսահլայ Համազասպ թագաւորի, առ ի մեկնութիւնս ահաւոր բանիցն Սողոմոնի... և մեկնեցի զԵրգս երգոցն նորին հրամանաւ...» (Գ. Նարեկացու Մատենագրութիւն, էջ 367, և «Հայապատում», էջ 290—291)։

Նարեկացու վերոհիշյալ երկու հիշատակություններից դուրս, Սենեքերիմի նույն օրերում (Աշոտի ողջության ժամանակ) թագավոր լինելու մասին վկայում է նաև Վարագա վանքի սուրբ Սոֆիա եկեղեցու հետևյալ արձանագրությունը.

«ՆԼ (981 թ.) ես Խուշուշ խաթունս դուստր Գագկայ յազգէն Բագրատունեաց կենակից Սենեքերիմ ար[քայի]... սուրբ տաճարաս, յիշեցէք ի մաքուր...» («Ազգագրական հանդես», 1911, № 21, էջ 66։[4]

Ամփոփելով վերոհիշյալ տվյալները, ստանում ենք հետևյալ պատկերը.

1 Չամչյանը, հայտնի չէ թե որտեղից վերցնելով, Արուսահլի մահը դնում է 971-ին, և ապա օգտվելով Նարեկացու վերևում բերված «Ապարանից խաչի պատմությունն»-ից, գրում է.

«Եւ էին Արուսահլայ երեք որդիք, որոց անդրանիկ կոչիւր Սահակ-Աշոտ, միջինն՝ Խաչին-Գուրգէն և կրտսերն Յովհաննէս-Սենեքերիմ։ Երեքին սորա յետ մահուան հօր իւրեանց Արուսահլայ՝ թագաւորեցին, ի միասին (972-ին) ըստ կարգի, Աշոտ ի վերայ Վասպուրական աշխարհի առ հասարակ, և Գուրգէն ի վերայ միոյ մասին, այսինքն ի վերայ նահանգին Անձևացեաց, իսկ Սենեքերիմ ի վերայ նահանգին Ուչտունեաց» («Պատմութիւն Հայոց», Բ հատոր, էջ 841)։

Թեև մեր պատմագիրների մոտ Վասպուրականի այս բաժանման մասին ոչ մի խոսք չկա, սակայն պիտի ընդունել, որ Չամչյանի այս կոտրումն ընդհանրապես ճիշտ է, որովհետև այդ սովորությունը Արծրունյաց տոհմի մեջ հնից է գալիս։ Թովմա Արծրունու Պատմությունից իմանում ենք, որ Գրիգոր-Դերենիկի մեծ որդու՝ Աշոտի մահվանից հետո, վերջինիս եղբայրները՝ Գագիկը (հետագայում թագավոր) և Գուրգենը իրենց վրա են բաժանում Վասպուրականի հողերը։ Այդ բաժանմամբ, յուրաքանչյուր եղբոր ընկած գավառների լրիվ ցուցակը տես Թ. Արծրունի, էջ 251—253, իսկ անկատարը, էջ 279։

- Սենեքերիմի և Խուշուշի ամուսնությունից ծնած Մարիամ անունով մի աղջիկը՝ Մարմաշենում հետևյալ արձանագրությունն է թողել. «Շնորհիւն Աստուծոյ ես Մարիամ Աւխազաց և Հայոց թագուհի, դուստր Մեծին Սենեքերիմա և թոռն Գագկա Հայոց արքայի, որ եառ զՏարուս ի սուրբ... ուխտս Մարմաշէն առաջնորդութեամբ հաւր Սոթենիսի վասն Գագկա իմ պապոյն մեղաց թողութեան և Կատային [Կատրամիդէ] իմ հանեանն...» («Շիրակ», էջ 149)։

Վրաց պատմիչ Ջուանշիրը հայտնում է, որ ափխազների և վրաց թագավոր Գեորգու կինն էր այս Մարիամ թագուհին, որ իր ամուսնու մահից հետո Պոլիս է գնում և կայսրից՝ իր որդի Բագրատի համար կլուրապաղատի պաշտոն է բերում։

Ահա Ջուանշիրի գրածը.

«Եւ էառ զթագաւորութիւնն Բագրատ, և զորքաչ մայրն նորա Մարիամ ի Կոստանդնուպոլիս», և երեք թուղթ գաչանց խաղաղութեան և պատիւ կիւրոպաղատութեան որդւոյ իւրոյ... Եւ տիրեաց Բագրատ հայրենեաց իւրոց...։ Սա չինեաց զպարիսպ Ախալքալաքի, և զի մայր նորա Մարիամ՝ դուստր էր Սենեքերիմայ Հայոց արքայի, ետուն զրաղաքն Անի՝ բնակիչք նորա՝ ի թագուհին Մարիամ» (Ջուանշիր, էջ 111—112)։

1. Ըստ Ասողիկի՝ Աշոտը թագավորում է 969—990 թ. թ.

2. Ըստ Նարեկացու՝ Դուրգենը թագավոր էր 973 թ.

3. Ըստ Վարագի արձանագրության՝ Սենեքերիմը թագավոր էր 981 թ.

4. Ըստ Նարեկացու՝ Աշոտը, Դուրգենը և Սենեքերիմը թագավոր են 983 թվին։

Հաստատելուց հետո, որ այս երեք եղբայրները միաժամանակ թագավորել են Վասպուրականում, այժմ անցնենք այդ օրերին պատահած քաղաքական անցքերի պատմությանը։

Երբ Բագրատունի Սմբատ Բ թագավորը 982 թվին հարձակվում է իր հորեղբոր՝ Կարսի Մուշեղ թագավորի վրա, վերջինս իրեն օգնության կանչեց «Զարլհաճայ Դելմաստանի, թոռն Սալարին, ամիրայ պարսիկ» (Ասողիկ, էջ 188)։

Արլահաճան մտնելով Հայաստան, հասնում է մինչև Շիրակ և մի շարք ֆնասներ տալուց հետո, վերադառնում է։

Ատրպատականում Դելմիկներից դատ կային նաև մի երկու մահմեդական էմիրություններ, որոնց ներկայացուցիչներից մեկը՝ Արուղլուփը, ոչ միայն Վասպուրականից խլում է Դողքն դավառը, այլև Աշոտ Արծրունու և նրա եղբայրների միասին թագավորության օրերին, 983 թվի մոտերը, հարձակվում է Սալարի թոռ Արլհաճայի վրա, և նրա ձեռքից խլում է Դվինն ու մյուս քաղաքները։ Արլհաճան Բյուզանդիա է փախչում, և դանդան տեղեր թափառելուց հետո սպանվում է իր ծառաների ձեռքով։ (Ասողիկ, էջ 189)։

983 թվականին, էմիր Արուղլուփը հանկարծ մտնում է Վասպուրական. նրա դեմ է դուրս գալիս Վասպուրականի զորահրամանատար և իշխանաց իշխան Աբլղարիրը երկու այլ իշխանների հետ։ Հասնելով Ծուաշ դավառի Բակյար գյուղը, հայ զորքն անհոգ կերպով ձիերը բաց է թողնում արոտը. այդ բանից օգտվելով՝ Արուղլուփի մարդիկ հարձակվում և ավար են տանում ձիերը։

Հանկարծակիի եկած հայերը մտնում են Բակյար ամրոցը, բայց հետո հավատալով նենգ թշնամու երդումներին, հանձնվում են։ Մահմեդականները դրժելով իրենց երդումը, անխնա կոտորում են հայ զորքը, ողջ թողնելով միայն երեք իշխանների, որոնց ազատում են մեծ փրկանք ստանալուց հետո (Ասողիկ, էջ 189—190)։[1]

1 Այս իշխաններից մեկը կոչվել է Տիգրան մարզպան։ Մարմաշենում գտնված մի գերեզմանաքարի վրա գրված է հետևյալը. «Այս հանդիստ է Սոփիայ աղախնոյն Քրիստոսի, կնոջ Վահրամայ Պահլաւունւոյ իշխանաց իշխանի, զոտերն Տիգրանայ Հայոց մարզպանի տեառն Անձևացեաց մեծին Վասպուրականի, կիսաւրայ առ Աստուած փոխեցայ եւ թողի զաւակս իմ տրտում... ի Թ. Հայոց ՆԿԴ» (Վիմական տարեգիր, էջ 15)։

Նկատի ունենալով 464=1015 թվականը, «Տիգրան Հայոց մարզպան» և «Վասպուրական» բառերը, ես գտնում եմ, որ պատմագրի և արձանագրի Տիգրանները միևնույն անձն է։ Սրանից հետևում է նախ, որ վերոհիշյալ մարզպան Տիգրանը կոչվել է «մարզպան Հայոց», երկրորդ, որ Հայոց մարզպան Տիգրանը Վասպուրականի Անձևացիք գավառի իշխան է և հավանաբար Արծրունի Դուրգեն Ապուսելճի թոռը, ուրիշ խոսքով Ատոմի որդին պիտի լինի։

Այս կապակցությամբ, հետաքրքրական է դառնում հատկապես 10-րդ դարում «մարզպան» պետական գործակալությունը, որն Արծրունիների պատմության մեջ առաջին անգամ տրված է Դագիկ թագավորի եղբոր Դուրգենին, Բագրատունի Սմբատ Ա. թագավորի կողմից։

Թովմա Արծրունին գրում է, որ Սմբատը՝ Արծրունի Գրիգոր-Դերենիկի որդիներից՝ Աշո-

987 թվականին Ատրպատականի մի ուրիշ էմիր, Ռովդի որդի Աբլհաճը հարյուր հազարանոց պարսկական բանակով հարձակվում է Դողթնի ամիրա Ապուզլուփի վրա, և «հանէ ի նմանէ զքաղաքսն Սալարին,[1] յաւարի առեալ զաշխարհն նորա զԴողթն՝ զայ հասանէ ի Դուին քաղաք և առնու զնա և խնդրէ հարկս զանցեալ ամացն ի Հայոց. զոր ընդդէմ յուզարկեալ զհարկսն թագաւորն Սմբատ [I] մեծամեծ ընչիւք դարձոյց» (Ասողիկ, էջ 198—199)։

988 թվին, Հեր զավառի մահմեդական տիրոջի՝ Ալևորի որդին, և նրա ընկերները՝ Հերի սահմանների մերձակա մի գյուղից մի քանի հայ մանուկներ հափշտակելով տանում են։ Նույն տեղ պատահելով Սարգիս Ազատ անունով մի հայ իշխան, իսկույն հափշտակողների վրա է հարձակվում, նրանց սպանում, և երեխաներին ազատում։ Ալևորը, զիմելով Ատրպատականի էմիր Ռովդի որդի Աբլհաճին,- խնդրում է իր որդու մահվան վրեժն առնել հայերից, խոստանալով իրը վարձատրություն՝ նրան տալ Հեր քաղաքը։ Աբլհաճը պատրաստվում է մտնել Վասպուրական, բայց հարձակման օրվա նախորդ գիշեր, սպանվում է անհայտ մարդկանց ձեռքով, որից հետո Ատրպատականի բանակը տեղից չի շարժվում այլևս (Ասողիկ, էջ 199—200)։

Աշոտ Արծրունու մահվանից հետո (990 թ.) նրա կտրվածները հավասարապես իրար մեջ են բաժանում Գուրգենն ու Սենեքերիմը (Ասողիկ, էջ 281)

Թե ինչքան թույլ է եղել Վասպուրականի ռազմական ուժը այս երկու թագավորների՝ Սենեքերիմի և Գուրգենի իշխանության օրերին, այդ ցույց է տալիս հետևյալ դեպքը։ Ատրպատականի էմիր՝ Աբլհաճի որդի Մամլան, Բագրևանդում հայերի և վրացիների միացյալ ուժերից, 996-ի մոտերը կրած պարտության[2] վրեժն առնելու նպատակով, 998-ին «...Ելեալ ի Թաւրիզոյ՝ ի քաղաքէն իւրմէ ի սահմանս Հերայ, ծանր ամբոխիւ, լայն բանակաւ՝ անցանէ ընդ աշխարհն Վասպուրականի, զայ իջանէ ի գաւառն Ապահունեաց» (Ասողիկ, էջ 270)։

տին և Դագիկին պատիվներ տալուց հետո, նրանց եղբոր Գուրգենին «զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձրաբերութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի» (Թ. Արծրունի, էջ 239)։ Բայց թե ի՞նչ է եղել նույն օրերին առհասարակ «մարզպան»-ի պաշտոնը, արդյոք դա միայն պատվանո՞ւն էր, թե՞ կապված էր որոշ պարտականության հետ, այդ պարզած չի պարզվում։

Ըստ պրոֆ. Ա. Սամուելյանի ենթադրության, Ը դարում, Բագրատունիների մոտ, «մարզպանիս տիտղոս կրում էին օտար թագավորների հետ հարաբերությունների գործը վարող իշխանները։ Սրանք յուրատեսակ արտաքին գործերի մինիստրներ էին, եթե այն անվանենք արդիական առումով» («Հին հայ իրավունքի պատմություն», էջ 236)։

Համաձայն այս բացատրության՝ ուրեմն Գուրգենը և Տիդրանը, յուրաքանչյուրն իր ժամանակում, վարել է Արծրունի թագավորության գործերը՝ հարևան մահմեդական էմիրների, բյուզանդական իշխանության և կամ Բագրատունյաց թագավորության հետ, բայց դարձյալ պիտի կրկնել, որ վերոհիշյալների այդպիսի գործունեության մասին, պատմական ոչ մի փաստ տեղ չի հասել։

1 Ինճիճյանը «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց», էջ 217, Սալարին համարում է քաղաք. կարդալով Ասողիկի գրվածքը հետևյալ ձևով՝ «Հանէ ի նմանէ զքաղաքն Սալարին...», որը իհարկե սխալ ընթերցման արդյունք է։ Սալարը, ինչպես վերևում տեսանք, Դելմիկների էմիրության առաջին հիմնադիրն է։

2 Ատրպատականի էմիր Ռովդի որդի Աբլհաճին չպետք է չփոթել Դվինի տեր Աբլհաճայի հետ, նրանք տարբեր անձնավորություններ են։

3 Ասողիկ, էջ 266—267։

Կովում, հայոց և վրաց միացյալ ուժերից դարձյալ պարտվում է Մամլան և ետ է փախչում՝ հալածվելով մինչև Արճեշ քաղաքի դռները։ Հասկանալի է, թե ինչ ահռելի դրություն է ստեղծվել Վասպուրականի հայ ժողովրդի համար ներխուժող ու նահանջող բանակների կողմից, որի մասին ոչ մի հիշատակություն չկա պատմիչների մոտ։

Անկասկած, խոշոր և մանր հարձակումներ Ատրպատականի սահմաններից դեպի Վասպուրական շարունակվել է հետագայում ևս, մինչև 1000 թվականը և դեռ նրանից էլ հետո։ Այս ուղղությամբ Ասողիկը հետևյալ ուշագրավ տեղեկություններն է հայտնում։

«Վրաց Դավիթ կյուրոպաղատի մահվան օրերին (1000 թ.), երբ հունաց Վասիլ կայսրը Տայոց աշխարհն է գալիս Դավթի՝ հույներին կասկած հողամասերը վերցնելու, Վասիլին դիմավորելու են գնում, ի միջի այլոց, նաև Գուրգեն և Սենեքերիմ Արծրունիները (Ասողիկ, էջ 277, 281)։ Վասիլը նրանց հարգում և պատվում է արքայատուր նվերներով։ Հետո «... [Վասիլը] հրովարտակ առաքեալ առ մերձաւոր ամիրայսն Տաճկաց, զի մի՝ մեղիցեն աշխարհին Վասպուրականի՝ դաղարեցոյց զառ և զդերութիւն և զհարկապահանջ բռնութիւնն» (281)։[1]

Հենց այս պարագան է ակնարկում Ուռհայեցին, երբ գրում է.

«Իսկ յամի Ն՝Ա՝Թ՝ (1000) թուականութեանս հայոց եղև սէր և միաբանութիւն մեծ ընդ Վասիլն և ընդ Սենեքերիմ արքայն հայոց» (էջ 42)։[2]

1002—3 թվականներին, մեռնում է նաև Գուրգեն Արծրունին, «և Սենեքերիմ ունի զաթոռ թագաւորութեանն...» (Ասողիկ, էջ 281)։

Չամչյանն ասում է.

«Մնացին նորա [Գուրգենի] երեք որդիք, Դերենիկ, Գագիկ և Աշոտ, և զի մանկահասակք էին նոքա, Սենեքերիմ եղբայր Գուրգէնայ տիրէր այնուհետև ի թոռանդակ աշխարհն Վասպուրականի» (Չամչյան, Պտմ. Հայոց Բ, էջ 883)։

Գուրգենի որդիների մանկահասակ լինելու վերաբերյալ, Չամչյանը որպես աղբյուր ցույց է տալիս Ասողիկին և Ուռհայեցուն։ Վերևում տեսանք, որ Ասողիկն այդ մասին ոչինչ չունի. իսկ Ուռհայեցին ոչ միայն որդիների մանկահասակ լինելու, այլև Գուրգենի մահվան մասին ոչինչ չի իմանում։ Գալով Վարդանին՝ նրա Պատմության մեջ կարդում ենք միայն այն, որ Սենեքերիմը գաղթելիս՝ հետն է տանում նաև Գուրգենի երեք որդիներին՝ Դերենիկին, Գագիկին և Աշոտին (էջ 126, Մոսկվա)։

---

1 Եթե միայն, գաղտնարար, ինքը չի թելադրել այդ թուրք ամիրաներին հարձակվելու Վասպուրականի վրա։

2 Թե ինչո՞ւ այդ սերն ու բարեկամությունը եղել է միայն Սենեքերիմի հետ, և ոչ նաև Գուրգենի հետ, այդ պարագան պարզ չէ։ Ուռհայեցու խոսքերից կարելի է եզրակացնել, որ Գուրգենը 1000 թվականին արդեն չկար, և Սենեքերիմը միայնակ էր թագավորում՝ կոչվելով «արքայ Հայոց»։ Ուռհայեցու այս արտահայտությունը որոշ չափով հաստատվում է նաև մի այլ գծով։ Սարիղամիշում գտնված մի խաչքարի վրա արձանագրված է հետևյալը.

«Կամ եգև հայր (?) չրի զառուս վասն մեղացս հանել յանուն Աստուծոյ Նեա՝ =992 ի թագաւորութեանն Սենաքերիմա, ես Գորգ կակնեցի խաչս» (Կ. Ղաֆադարյան, «Հայկական դրի սկզբնական տեսակները», 1939 թ., Երևան, էջ 88 և 52—53)։

992 թվականին ըստ Ասողիկի, Գուրգեներ տակավին ողջ էր, էլ ինչո՞ւ արձանագրության մեջ միայն Սենեքերիմի անունն է հիշվում։ Այս զույգ տեղեկությունները գալիս են Գուրգենի մահվան համար Ասողիկի տված թվականը կասկածելի համարելու։

Այժմ անցնում եմ Անձևացյաց թագավոր Դերենիկի պատմության, որն անում է միայն պատմագիր Ուռհայեցին։

975 թվականի մոտերքը Անձևացիքի թագավոր Դերենիկը՝ սպարապետությունից հեռացնելով Արլղարիբ իշխանին, փոխարեն Սարդիս Ազատ անունով մեկին է սպարապետ կարգում։

"Բլղարիրը զայրացած այս բանից, Պարսկաստանի մահմեդական էմիրներին թելադրում է հարձակվել Անձևացիքի վրա, ապահովեցնելով, որ ինքը նրանց դեմ դուրս չի գալու։ Մահմեդական մի էմիր, հեր դավառի իշխող Աբլհաճը հանկարծակի կերպով, գիշեր ժամանակ հարձակվում է Դերենիկի վրա, կոտորում նրա զորքերին, և Դերենիկին գերի վերցնելով, տանում է հեր դավառը։

Այս դեպքը շատ վատ ազդեցություն է թողնում Վասպուրականի հայ ժողովրդի վրա։ Եկեղեցին անիծում է Արլղարիրին և նրան հեռացնում քրիստոնեական համայնքից։ Արլղարիրն զղալով իր հանցանքի ծանրությունը, հետագայում, իր քաջության և ճարպիկության շնորհիվ հաջողում է Դերենիկ թագավորին ճվաշ ավանի Բակ գյուղից[1] փախցնել՝ Աբլհաճի և նրա հաղարից ավելի զինվորների ձեռքից և վերադարձնել Վասպուրական (Ուռհայեցի, էջ 30—33)։

Ո՞վ է 975 թվականին Անձևացիքում իշխող այս Դերենիկ թագավորը։ Դիտենք, որ 968—1003 թ. Անձևացիքում թագավորել է Աշոտի և Սենեքերիմի եղբայրը՝ Դուրգեն-Խաչիկը։ Խնդիրը պարզ չլինելու պատճառով, ես պարտավորվում եմ քննության առնել այս հարցը։

Ինչպես վերևում ասվեց, Չամչյանն ու Օրմանյանն այս Դերենիկին համարում են Գագիկ Արծրունու որդի Դերենիկը, առանց ուշադրություն դարձնելու Ուռհայեցու տված ոչ ժամանակին, ոչ էլ «Անձևացյաց թագավոր» բառերին։

Խնդիրը բացատրելու համար պետք է սկսել Դուրգեն Անձևացուց։ Ըստ Ուռհայեցու՝ Բագրատունի Գագիկ Ա-ի մահից հետո, նրա փոքր որդի Աշոտը իր մեծ եղբոր՝ Հովհաննես Սմբատի դեմ պատերազմելու համար դնում է Վասպուրական Սենեքերիմ Արծրունու մոտ, նրանից զորք վերցնելուց հետո, տեսնվում է Դուրգեն Անձևացու հետ, ապա Վարազի վանքն է դնում ուխտի և հետո վերադառնում է Շիրակ (Ուռհայեցի, էջ 7—8)։

Նախ պետք է նկատի ունենալ այն պարագան, որ այս պատմությունն անում է զարձյալ միայն Ուռհայեցին։ Հետո, եթե ըստ Ասողիկի՝ Դուրգենը մեռել է 1003 թվին, ապա այլև նա չէր կարող ապրած լինել մինչև Գագիկ Ա-ի մահից՝ 1020 թվականից հետո։ Երկու պատմագիրներից մեկն ու մեկը թյուրիմացության մեջ է[2]։

1 Դիտելի է, որ դեպքը տեղի է ունեցել զարձյալ Ճվաշ դավառում, որից հետևում է, որ Ուռհայեցու Բակ և Ասողիկի Բակյար անունները միևնույն ամրոցի համար է գործածված։

2 Բացի այս, ինչպես վերևում տեսանք, Դերենիկի պատմության առնչությամբ, Ուռհայեցին ևս հիշատակում է Աբլղարիբ զորավարի, Սարդիս Ազատի, և մահմեդական էմիր Աբլհաճի անունները, որոնք գտնվում են նաև Ասողիկի մոտ, գրեթե համընկնող թվականներով։ Սակայն հաշվի պետք է առնել այն հանգամանքը, որ Ուռհայեցին մի քանի դեպքերի ժամանակները մոտ 50 տարով առաջ է դնում։ Այսպես, ըստ Ուռհայեցու՝

1. Բագրատունի Գագիկ Ա-ի գահակալությունը տեղի է ունեցել 961 թ.։

2. Գագիկ Ա-ի մահը՝ 971 թվին։

Ով է հաջորդել Դուրգեն Անձևացուն։ Ուռհայեցին այդ մասին ոչինչ չի ասում, իսկ Ասողիկը գրում է. «Եւ ապա Դուրգէն վախճանի ի ՆԾԻ (1003) թուականին և Սենեքերիմ ունի զաթոռ թագաւորութեանն...»։ Այս խոսքերից պարզվում է, որ Դուրգենի մեծ որդին Դերենիկը որպես երիտասարդ և անփորձ մարդ, ենթարկվել է իր հորեղբոր՝ Սենեքերիմին և նրան է թողել նաև Անձևացիքի վերին կառավարությունը։ Բայց մի քանի տարի հետո, երբ Դերենիկը մեծանում է, նա արդեն համարվել է Անձևացիքի թագավոր, և այդ շրջանում էլ առևանդվել է Արլհաճի ձեռքով։ Հետագայում, Դերենիկը օգնում է իր հորեղբոր՝ Սենեքերիմին, կազմակերպելու Վասպուրականի պաշտպանության գործը (Թ. Արծրունի, էջ 306)։ Այժմ անդրադառնանք պատմության ընդհատված թելի շարունակությանը։

Տեղեկությունների կողմից անկասկած ամենահարուստը Սենեքերիմի միայնակ թագավորելու շրջանն է. հատկապես Վասպուրականի գաղթը հիշվում է ժամանակակից և ուշ շրջանի մի քանի պատմագիրներից։

Սենեքերիմի օրերին ավելի էր ուժեղացել թուրքական կամ պարսկական դանդաղ ցեղերի հարձակումները Վասպուրականի վրա։ Այս առթիվ Սամուել Անեցին ասում է.

«1002 թ. ելին ազգն թուրքաց և աւերեցին զգաւառն Վասպուրականի. և յոյժ նեղեալ լինէր թագաւորն նոցա Սենեքարիմ» (էջ 104)։

Թովմա Արծրունու շարունակողն այսպես է նկարագրում թուրքերին.

«[Թուրքք] տիրեցին աշխարհի ի ծովէն արևելից մինչև ցծովն արևմտից... և նոքա ունելով զքնութիւն արիւնարբու զազանի, զի են ազգք անաւոր տեսլեամբ, զի տեսիլ զիմաց նոցա զարհուրեցուցանէ զտեսողսն և անարեկ առնէ» (էջ 306. Պետերբուրգ)։ Սենեքերիմ և իր եղբորորդին Դերենիկը (ըստ Թ. Արծրունու՝ եղբայր) զիմադրում են այդ հարձակումներին։

Անդրադառնալով այդ դեպքերին, պատմիչը գրում է՝ «Յայնմ ժամանակի այր ոմն երևելի տոհմակից զտեալ արքայեն Սենեքարիմ մեծի,[1] զոր Մարգարեն Եսայի պատմէ վասն նորա, և սա նոյն անուանակից հաւուն իւրոյ Սենեքերիմ անուամբ, էր եղբայր նորա մեծ իշխանն Դերանիկ։ Սորա... տիրեցին հայրենի ընիկ զաւառացն իւրեանց Վասպուրականի, և ի զիմի հարեալ այլազգեացն՝ ոչ սային թույլ աւերել զաշխարհն, զի ունէին զանմատոյց ամրոցն զՇամիրամաշենն, զաւանն Վան և զերկնապիշ և զպարանոցատանջ զանառիկ բերդն զԱմեկ, առ ոչինչ համարելով զյարձակումն այլազգեացն յարաժամ, այլ հանապազօր ի կրունկն զարձուցանէր օգնականութիւնն Աստուծոյ» (էջ 306, Ս. Պետերբուրգ)։ Ուրեմն՝ Սենեքերիմ և իր եղբայրը (ճիշտը եղբորորդին) Դերենիկը, ըստ վերոգրյալ տեղեկության հենվելով Վասպուրականի ամրությունների և դինված ժողովրդի վրա, բա-

3. Ուրեմն՝ Աշոտի Վասպուրական գնալը 971—72 թ. թ.։

4. Դերենիկ Անձևացու գերվելը 975 թ.։

Եթե մենք վերևում հիշված թվականների վրա ավելացնեինք ևս 50 տարի, ստացվում են ցարդ ընդունված թվականները, բացառությամբ Դերենիկի գերության, որովհետև այդ թվականը հասնում է 1025 թիվ, որն իհարկե ճիշտ չէ, քանի որ գիտենք, թե Սենեքերիմի գաղթը տեղի է ունեցել 1021-ի մոտերը և ոչ ավելի ուշ։ Անկասկած այստեղ կա Ուռհայեցու շփոթությունը և սխալ թվականի նշանակումը։

1 Խոսքը Ասորեստանի Սենեքերիմ թագավորի մասին է։

վական ուժեղ դիմադրություն են ցուցաբերել թշնամուն և կարողացել են որոշ չափով երկիրն ավերմունքից ազատ պահել։

Այս հանգամանքի շնորհիվ Վասպուրականում ծավալվել է խաղաղ շինարար աշխատանք, այնտեղ զարգացել է ժողովրդական տնտեսությունը, որով և Սենեքերիմ Արծրունին հնարավորություն է ունեցել Վարագա լեռան վրա նոր վանք շինելու[1]։ Պատմիչը մեզ հավատացնում է որ՝

«... Կէին ի խաղաղութեան ի դաւառն Վասպուրականի. ամենայն աշխարհաց անկելոց և դերելոց տեղի ապաստանի ի նա զտանիւրն (Թովմա Արծրունի, էջ 307)։

Պատմագրի այս խոսքերը որոշ չափով հաստատվում են սիրիացի պատմիչ Բարհեբրեյի հետևյալ տեղեկությունով։ Վասպուրականի Սենեքերիմ թագավորի հրավերով, Իրաքից նրա մոտն է գնացել արաբ փիլիսոփա՝ Լուկայի որդի բաալբեկցի Կոստան, որ այնուհետև Հայաստանումն է ապրել մինչև իր կյանքի վերջը։ Սենեքերիմը նրա աճյունի վրա կառուցել է մի փառավոր դամբարան (մավզոլեյ) (Н. Марр, Ани, էջ 36)։

Այս տեղեկությունը հաստատում է նախ, որ Սենեքերիմը ուսումնասեր և գիտնականներին հարգող մի անձնավորություն է եղել, և հետո, հաստատվում և նաև Թովմա Արծրունու շարունակողի այն խոսքերը, որոնց համաձայն, Վասպուրականը Սենեքերիմի օրերին «ամենայն աշխարհաց անկելոց և դերելոց» «...տեղի ապաստանի» է եղել, ինչ դիտենանք, թե փիլիսոփա Կոստան չի հալածվել որևէ իշխանության կողմից և հյուրընկալություն է գտել Սենեքերիմի մոտ[2]։

---

1 Վարագի վանքը Թովմայի Պատմության մեջ հիշվում է դեռ 858 թվին (էջ 214)։ Սենեքերիմի շինածն իմ կարծիքով, Վերին Վարագն է, որ գտնվում էր Վարագա լեռան ձորի մեջ։ 1500 թվականներին՝ Վանի զինվորների սոլ-աղասին՝ Ջամուշչի օղլի Խալիլ աղան Վերին Վարագի եկեղեցու երեք գմբեթներից մեկը քանդեց և իր տան համար բաղանիք շինեց (Ս. Ինճիճեան, Ասիա, հատ. Ա., Հայաստան (սոր Հայաստան), էջ 148։

– Հայտնի է, որ Սենեքերիմին հասած հայրենի ժառանգությունը Ռշտունիքն էր, իր Ոստան կենտրոնով։ Մինչև 1915 թվականը, Ոստանում կանգուն էր մի մուսուլմանական գմբեթաձև դամբարան (մավզոլեյ)։ Լինչն իր „Armenia" գրքի II հատորում տեղեկություններ է տալիս այս շենքի արտաքին ձևի մասին։ Շենքի վրա եղած արաբական մակագրությունները, ըստ Լինչին ուղեկցող մի թուրք գիտնականի ընթերցումի, հայտնում են, որ «այդ դամբարանը պատկանում է Ոստանի տեր շեյխ Իբրահիմի աղջկան», որի անունը Գալիմե է եղել („Армения", ռուսերեն, II հատոր, էջ 159-160)։

Դժբախտաբար Լինչը չի բերել արաբական արձանագրության պատճենը, որպեսզի հնարավոր լիներ պարզել նրա բովանդակությունը, և ստուգել թուրք գիտնականի ընթերցանության կամ թարգմանության իսկությունը։

Վանեցի ուղեգիր Մ. Միրախորյանն այս դամբարանի մասին հետևյալն է գրում.

«Կտեսնվի աստ [Ոստանում] նաև քարե գեղեցկաշեն գմբեթ մի կառուցյալ երկրի վերա, արաբական հիշատակագիրներով, որք ետրեն գրված լինիլ կթվին, իսկ գմբեթն՝ մեծ մարդո մը հանգստարան է, իր տեսքեն, որպես հայտնի կերևիս։ (Նկարագրական ուղև. ի հայարն. գավառս արևել. Տաճկաստանի, Պոլիս, 1884 , Ա. հատոր, էջ 113)։

Արդյոք, Ոստանի այս մավզոլեյը փիլիսոփա Կոստայի դամբարանը չէ՞։

Շատ հարմար է այստեղ հիշել նաև Ռշտունիքի հայ և բուրգ ժողովրդի մեջ պահված հետևյալ քրդերեն ասացվածքը.

«Դերե Աղթամարե, Կումբաթե Ոստանե, փրրե Բաթմանե, խրրաբ նա բրդ, հատա խրզրե զամանեռ։ Այսինքն՝ «Աղթամարի եկեղեցին, Ոստանի գմբեթը, Բաթմանի կամուրջը չեն կործանվելու՝ մինչև աշխարհիս վերջը»։ Ավանդությունն այս երեք շենքեր շինող վարպետի մասին տալիս է մի անեկդոտ ևս, որը երկար լինելու պատճառով այստեղ չեմ բերում։

Սենեքերիմի ժամանակ Վասպուրականում, հակառակ թուրքական հարձակումներին, հայ ժողովուրդը զարձյալ շինարարական գործերով է զբաղվել, դա դուլյ է տալիս, օրինակ, Սարիգամիշում գտնված հետևյալ արձանագրությունը. «Կամ եղեւ հայո(?) ջրի զառուս վասն մեղաց հանել յանուն Աստուծոյ ՆԽԱ ի թագաւորութեան Սենեքերիմա ես զորգ կանգնեցի խաչս» (Կ. Լաֆազարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան 1939, էջ 52 – 53, 88։)

Ո՞վ է այս արձանագրության մեջ հիշված Սենեքերիմ թագավորու Հայտնի է, որ Վանանդի – Կարսի թագավորների մեջ Սենեքերիմ անունով մարդ չի եղել. որով և մնում է եզրակացնել, որ այս «Սենեքերիմը»-ը, ուրիշ ոչ ոք չէ, եթե ոչ Սենեքերիմ Արծրունին, որն հիրավի 992-ին թագավորում էր Վասպուրականում, իր եղբայր Գուրգենի հետ։ Այս արձանագրության կապակցությամբ Ատրպետը հետևյալն է գրում. «Այսպես էլ Ժ. դարում Սենեքերիմ Արծրունի չէր կարող Մասիսի կիկլոպյան շրանցքը շինել. 10000 ֆուտ բարձրությունից պեղել, կիկլոպյան որմեր շինել և ջուրն իջեցնել Մասիսի ստորոտը ոռոգելու։ Նրա թողած արձանագրությունը ցույց է տալիս թե ջրանցքը գործել է մինչև Սենեքերիմի օրերը, որը վերանորոգել է կործանված մասերը» (Հանդես Ամսօրյա, 1924, էջ 141)։

Ինձ համար պարզ չէ սակայն, թե Ատրպետը ինչ փաստերի հիման վրա վերոհիշյալ արձանագրության մեջ եղած «ջրի առուն» համարում է հանված Մասիսից, քանի որ գրության մեջ Մասիսի անունը երբեք հիշված չէ։ Դժբախտաբար այդ առթիվ եղած (եթե միայն եղել է) զանազան ուսումնասիրությունները, որոնք որոշում են արձանագրության հավանական վայրը, ինձ անծանոթ են մնում։

1016-ի մոտերը, թուրքական հրոսակներն իրենց հարձակումներով նորից են խռովում Վասպուրականի խաղաղությունը։ Ուռհայեցին ասում է. «Ընդ աւուրսն ընդ այնոսիկ (Նկն. 1016) զօրաժողով լինէին խուժաղուժ ազգն անօրինաց, որք անուանեալ կոչին Թուրք, և հասեալ մտանէին յաշխարհն Հայոց ի Վասպուրական գաւառին և անողորմ ի բերան սրոյ կոտորէին գնաւատացեալքս Տրիստոսի» (էջ 47)։

Հարձակվողների դեմ է գնում հայկական բանակը Շապուհ զորավարի և արքայորդի Դավթի առաջնորդությամբ։

Ըստ Ուռհայեցու, հայերը երբեք այս թուրք հեծելազորքին չէին հանդիպել. նրանք ունեին այլակերպ դեմք, կանանց նման՝ երկար մազեր և զինված էին աղեղներով։

Բացի այս, Ուռհայեցին հայտնում է նաև, որ նույն օրերին, որպես թե «...զօրքն Հայոց չէին սովոր պատրաստ լինել ընդդէմ նետիցն», այսինքն նետերի դեմ պաշտպանվելու հարմարություններ զրահներ չունեին։

Բայց և այնպես՝ «...առհասարակ մերկացուցին զսուսերն իւրեանց ի պատենից և արիաբար ի պատերազմ ընթանային արիական գունդն Հայոց և բազումս յայլազգեացն սատակէին» (էջ 47)։

Այս քաջագործությունը սակայն չի կարող հաղթանակն ապահովել, որովհետև թուրքերի հեռաձիգ նետերը շատ փաստ են հասցնում հայ կտրիճներին, որոնք խոցվում են զրահ չունենալու պատճառով։

Այս բանը շուտով նկատում է փորձառու Շապուհ զորավարը, և հա-

կառակ արքայորդու՝ Դավթի կամքին, ետ է քաշում զորքը, արշավողների դեմ նոր տեսակի զենքեր՝ զրահներ պատրաստելու համար։

Այս անհաջողության լուրը Սենեքերիմն ստանում է մայրաքաղաք Ոստանում, իր որդուց և զորավար Շապուհից (Ուռ., էջ 47)։

Թվում է, թե թուրքերը չեն հետապնդել հայկական բանակը, այլ բավականացել են միայն ձեռքն ընկած ավարով և գերիներով։

Արծրունի թագավորը շատ է սարսափում այս անհաջողություններից և փոխանակ իր բանակի զինական պակասությունները լրացնելու ու երկրի պաշտպանությունը կազմակերպելու, դիմում է երբայական մարդարեությունների ընթերցման, որոնց մեջ կարդում է.

«Ի ժամանակին յայնմիկ փախիցեն յարեւելից յարեւմուտս, ի հիւսիսոյ ի հարաւ, և հանգիստ ոչ գտանեն ի վերայ երկրի, վասնզի արեամբ ծածկեն դաշտք և լերինք» (էջ 48)։

Այս խոսքերը Սենեքերիմը համարելով որպես նշան թուրքերի հարձակման, հետևցնում է «զկորուստ և զկոտորած ամենայն երկրի»։

Ի՞նչ էր մնում անել, եթե ոչ փոխել «աստվածասաստ բարկությունից» և գնալ մի ապահով վայր, որը նույն օրերին կլինեին բյուզանդական հողամասերը։

Հայտնի է, որ Վասիլ կայսրը դեռ 1000 թվականից սկսած ձեռնարկել էր իր բաժնում եղած հայերին տեղափոխել դեպի կայսրության ներքին սահմանները, նպատակ ունենալով «ստվարացնել երկրագործ ազատ գյուղացիության թիվը» և կազմակերպել ուժեղ բանակ։[1]

Հ. Մանանդյանը գրում է.

«Բազիլիոս (Վասիլ) Բ-ի ժամանակ արդեն Հայաստանում ևս, ինչպես Բուլղարիայում և Վրաստանում, սկսվեց գործադրվել հայ բնակչության տեղափոխումը Միջագետք ու Փոքր Ասիա. քաղաքական ու վարչական հատուկ նպատակներով։[2]

Ուրեմն գաղթի և տեղափոխության օրինակները գոյություն ունեին դեռ 1016-ից էլ առաջ, և Սենեքերիմ Արծրունին վերջնականապես որոշում է թողնել իր հայրենիքը և գնալ բյուզանդական երկրներ, մանավանդ որ իր և Վասիլի մեջ դեռ 1000 թվականին, ինչպես վերևում նշվեց «եղև սէր և միաբանութիւն»։

Անկասկած թագավորի այս մտադրությունը հավանություն է գտել իր ընտանիքի, ազատների, բանակի, ինչպես նաև ժողովրդի մի մասի կողմից։

Սակայն Սենեքերիմն անմիջապես չէր կարող գաղթել։ Այդ մասին անհրաժեշտ էր ամենից առաջ Վասիլի կարծիքն իմանալ. դրա համար էլ իմաց է տալիս նրան.

«Զոր իբրև լուաւ թագաւոր Վասիլ ուրախ եղև. և ետ նմա զՍեբաստիա. և տայր Սենեքերիմ զաշխարհն Վասպուրականի» (Ուռհայեցի, էջ 49)։

Դիխավոր պայմանի մասին համաձայնություն կայացած էր, մնում էին մանրամասնությունները, որոնց համար Վասիլի հրավերով՝ Սենեքերիմի որդին Դավիթը գալիս է մեկնում ճոխ նվերներով։ Դավիթը իր հետն է

1 Այս խնդիրների մասին կարդալ ակադ. Հ. Մանանդյանի «Հայաստանը թուրք-թաթարական արշավանքների շրջանում» աշխատությունը։

2 Նույն տեղում, էջ 15—16 և շարունակություն։

տանում «և զորդիս աղատաց և զեպիսկոպոսն տէր Եղիշէ և բեռնակիր ջորիս Յ. (3 հարիւր). բարձեալ զանձիւք և պէս պէս կազմութեամբ և տաճիկ ձիս Ռ. (հազար)» (Ուռհայեցի, էջ 49)։

Վերջերս հրատարակված «Անանուն ժամանակագրության»[1] մեջ կարդում ենք.

«և [Սենեքերիմ] զդեղեցիկ որդին իւր զԴաւիթ առաքեաց ի Կոստանդինոյպալիս Ռ (հազար) ազատորդով, և զտէր Եղիշէ... Հ (յոթանասուն) կրաւնաւորաւք թագաւորական փառաւք Յ (երեք հարիւր) ջորի արծաթի պաղանօք, առաջի և այլ զարդիւք» (էջ 16)։

Իսկ Ուռհայեցին տալիս է հետևյալ տեղեկությունը.

«և այսպիսի փառաւորութեամբ եմուտ Դաւիթ ի Կոստանդնուպոլիս՝ և զդրդեցաւ քաղաքն և ելին ամենեքեան ընդ առաջ նորա և զարդարեցին զփողոցս և զապարանս, և զանձս բազումս ցանէին ի վերա նորա» (էջ 49)։

Վասիլը սիրով և մեծ պատվով է ընդունում Դավթին. նրան սուրբ Սոֆիայի տաճարը տանելով, իրեն որդեգիր է անվանում «և ետ նմա զՍեբաստիա բազում գաւառօք» (Ուռհ., էջ 49), «բայց ի Հոռոմ վաներոյն» («Անանուն ժամանակագրութիւն», էջ 16)։

«Եւ տայր Սենեքերիմ զաշխարհն Վասպուրականի թեմարերդս ՀԲ (72) և գիւղս ՏՆ[2] (4400) և զվանորայս ոչ ետ» (Ուռհ., 49) «և ԴՌ գիւղս, Ը (8) քաղաքս» (Սամուել Անեցի, 104)։

Թե Դավիթը կատարված համաձայնության մանրամասնությունները իր հոր տեղեկացնելու համար, Երբ է վերադարձել Բյուզանդիայից, այդ մասին ոչինչ չգիտենք։ Մի բան պարզ է սակայն, որ Սենեքերիմը դանդաղում էր գաղթի պատրաստությունը տեսնելու, նա դժվարանում է սակայն թողնել իր ծննդավայրը և գնալ օտար հող։ Այդ անորոշ և տատամսոտ վիճակը տևում է մոտ հինգ տարի, մինչև 1021 թվականը, երբ պարսկաները վերջ ի վերջո ստիպում են նրան այդ բանն անելու, և նա 1021[3] թվականին Վասպուրականից գաղթում է։ Նրա հետն են գնում նաև, Դավթից բացի, նրա մյուս որդիները՝ Աբուսահլը, Ատոմը, Կոստանդինը (Վարդան, էջ 125, Մոսկվա) և Վեստ[4] (Առաքել Դավրիժեցի, էջ 621), ինչպես նաև Գուրգեն Անձևացու երեք որդիները՝ Դերենիկը, Դաղիկն ու Աշոտը (Վարդան, էջ 125)։ Արքայական տան հետ ժողովրդից գաղթում է նաև 14000 տղամարդ, չհաշված կանայք և մանուկներ (Թ. Արծրունի, 308)։

1 Տես՝ «Ձեռագրերի ուսումնասիրության Ինստիտուտի «Անանուն ժամանակագրութիւն», 1940 թ., Երևան։

2 «Անանուն ժամանակագրությունը»-ում այստեղ ունի «Տնգեղոս» բառ, որը ժամանակագրության հրատարակիչները չհասկանալով, ենթադրել են «Տեսունագեղոս (էջ 16), մինչդեռ դա պարզապես նշանակում է ՏՆ գեղս, այսինքն 4400 գյուղ։

3 Վարդանը և Վահրամ Պահլավունին Դելմիկների վերջին արշավաները— որի ընթացքում սպանվեց Վասակ Պահլավունին— անվանում են «բուրմայ պատերազմ»։

Նկատելի է, որ ըստ Վարդանի, «Թուրքաց արշավանքը» տեղի է ունեցել «ի չորս հարիւր եւ թանասուն (1021) թուին», այսինքն այն տարին, երբ Սենեքերիմը կամ գաղթի պատրաստություն էր տեսնում, կամ գաղթել էր արդեն։

Սա մի նոր փաստ է այն մասին, որ գաղթի օրերին թուրքերը դարձյալ սկսել են իրենց հարձակումները։

4 Ըստ Չամչյանի, Վեստը Սենեքերիմի թոռն է (Պատմ. Հայոց, Բ., էջ 902)։

«Եւ փոխեցին զհայրենի տունս իւրեանց Հայկազունք Արծրունիք Սենեքերիմ ի Թուին Հայկազեան տումարին Ն. Հ. (1021 թ.) և դեմ եղեալ զնացին յաշխարհն Ցունաց ԻԴԻ (14000) արամբք, թող զկանայս և զմանկտիս և արկան ընդ լծով ծառայութեանն Հռոմոց...»[1] (Թ. Արծրունի, էջ 307—8)։

Մեր պատմագիրները և ժամանակագիրները կարճ, բայց կսկծալի տողերով են արտահայտում իրենց վիշտը այս գաղթի մասին։

Վերոհիշյալ «Անանուն ժամանակագրությանն» հեղինակը գրում է. «...անտէր Ցնաց աշխարհն հայոց և որբ» (էջ 16)։ Իսկ Մատթեոս Ուռհայեցին գրում է.

«Եւ ելեալ Սենեքերիմ ամենայն ընտանեօք իւրովք և ռամկօք եկն ի Սեբաստիա, և անտիրացաւ աշխարհն հայոց ի Թագաւորաց և յիշխանաց»[2] (էջ 49)։

Մեր պատմագիրների և ժամանակագիրների մոտ Սենեքերիմի գաղթի թվականը զանազան տարիներում է նշանակված։ Սամուել Անեցին՝ 104 և 105 երեսներում, ինչպես նաև Թովմա Արծրունին՝ 308 երեսում, գաղթը գնում են 1021 (ՆՀ) թվականին։ Այդ թվականն է նշանակում նաև Սեբաստիայի շրջակայքի Դիվրիկի վանքի սրբերի մասունքի մի տուփի վրայի արձանագրությունը՝

«Ցամի փրկչին 1021, հայոց թուին ՆՀ ամին,...ի ժամանակս Ցունաց Վասլի կայսերն... Դաւիթ որդին Սենեքերիմայ հրամանաւ հօրն բազում ընծայիւք գնաց առ Վասիլ կայսրն, հանդերձ ծառայիւք, քահանայիւք, և Ռշտունեաց Եղիշէ եպիսկոպոսիւ, թէ զխորհուրդ Սենեքերիմ արքային ծանուսցեն առ կայսրն...» (Դ. Սրվանձտյան, Թորոս ախպար, Ա հատոր, էջ 234)։

Մատթեոս Ուռհայեցին և նրան հետևող Սմբատը, թուրքաց հարձակման տարեթիվը 1016-ին[3] գնելուց հետո, գաղթի թվականի մասին ոչինչ չեն ասում։ Դժբախտաբար ժամանակակից պատմիչ Արիստակես Լաստիվերտցին ևս այդ դեպքի որոշ թվականը չի տալիս։ Պատմելով Փոկասի որդի Նիկեփոր Ծովիզի Վասիլից ապստամբելը և Դավիթ Արծրունու ձեռքով սպանվելը, գրում է.

«Քանզի Դաւիթ որ Սենեքերիմ կոչիւր, որ նեղեալ ի Պարսից՝ տայ զհայրենի ժառանգութիւն իւր զտունն Վասպուրականի յինքնակալն Վասիլ, և առնու փոխարէն զքաղաքն Սեբաստիա և որ շուրջ զնովաւ գաւառք։ Եւ

1 Ընդգծումն իմն է։

2 Սենեքերիմի գաղթի պատճառներից մեկն անկասկած Բագրատունի Գագիկ Ա. թագավորի մահն է եղել։ Սենեքերիմն ամուսնացել էր Գագիկի ռուշուշ աղջկա հետ, և բնական էր, որ Գագիկի ուժեղությունը խոշոր չափով օգնում էր Սենեքերիմին՝ դիմագրելու թշնամիներին։ Գագիկի մահվանից հետո, դժբախտաբար, նրա որդիների՝ Աշոտի և Հովհաննես-Սմբատի միջև գահի շուրջն առաջացած կռիվներն այնչափ զբաղեցրին Բագրատունիներին, որ նրանք չկարողացան օգնել Արծրունի տոհմին՝ պահելու Վասպուրականը։ Սենեքերիմը մենակ մնալով ուժեղ թշնամու դեմ, պարտավորված լքում է իր հայրենիքը և հեռանում Սեբաստիա։

3 Ուռհայեցու Պատմության Վաղարշապատի հրատարակությունը թուրքերի հարձակումը դնում է 1016—ՆԿԵ-ին, իսկ Երուսաղեմի հրատարակությունը 1018—ՆԿԷ-ին (տես էջ 57)։ Բայց Սմբատ Գունդստաբլը, որ շատ խնդիրներում հետևում է Մատթեոս Ուռհայեցուն, թուրքերի հարձակումը և Սենեքերիմի գաղթը դնում է 1016 ին։ Սրանից էլ կարելի է եզրակացնել, որ Ուռհայեցու նախնական բնագրի Ե տառը Երուսաղեմի ձեռագրում փոխվել է Է-ի։

այսոքիկ ոչ հեռի ժամանակաւ, այլ երկու կամ երեք ամօք յառաջ գործեցաւ»[1] (էջ 20)։

Ծովիզի սպանությունը ըստ Ուռհայեցու՝ տեղի է ունեցել 1022-ին, (էջ 51), ուրեմն գաղթն ընկնում է 1019-ին, ըստ Անեցու՝ Ծովիզն սպանվել է 1027-ին (էջ 106),որով գաղթն ընկնում է 1024-ին։ Այս թվերն իրար անհամաձայն լինելով, որոշ եզրակացության հիմք չեն կարող ծառայել[2]։

Եթե ցուցակագրելու լինենք թուրքաց հարձակման և Սենեքերիմի գաղթի մասին մեր պատմագիրների և հիշատակագիրների տված թվականները, հետևյալ պատկերն ենք ստանում.

Պատմագիրներ	Թուրքերի հարձակումը	Վասպուրականի գաղթը
Թովմա Արծրունի . . .	—	1021
Լաստիվերտցի	—	—
Սամուել Անեցի	1002	1021
Մատ. Ուռհայեցի . . .	1016	—
Սմբատ Գունդստաբլ . . .	1016	—
Առաքել Դավրիժեցի . . .	1016	—
Անանուն ժամանակագրություն	1018	
Իվրիկի հիշատակարան . .	—	1021

Ինչպես տեսնում ենք, Սամուել Անեցուց բացի, մնացած պատմիչները, որոնք տալիս են միայն թուրքաց հարձակման տարեթիվը, գաղթն էլ, որպես այդ հարձակման անմիջական արդյունք, կցում են նրան՝ առանց տարեթիվը որոշելու։

Հ. Մանանդյանը քննելով Սենեքերիմի գաղթի ժամանակի հարցը, ճիշտ է համարում XI դարի բյուզանդացի պատմիչ Կեդրենոսի տված տեղեկությունը, ըստ որի, Սենեքերիմը պատրիկ աստիճանով փոխադրվել է Սեբաստիա 1016 թվի հունվար ամսին։[4]

Ինձ թվում է, որ Կեդրենոսի պատմածը վերաբերում է բանակցությունների համար Պոլիս գնացող Դավիթ Արծրունուն և նրա շքախմբին։[5]

---

1 Անկասկած ընթերցողը նկատում է, որ Լաստիվերտցին շատ անհոգ վերաբերմունք է ցուցաբերել այս պատմական դեպքերի ժամանակի ճշտման գործին։ Նախ, պատմագիրը Դավթին Սենեքերիմ է անվանում, և փոխանակ Սենեքերիմին, Դավթին է համարում Վասպուրական փոխանակողը։ Հետո, առանց Ծովիզի սպանության տարեթիվը որոշելու, Վասպուրականի գաղթը համարում է այդ դեպքից երկու կամ երեք տարի առաջ կատարված։

2 Չամչյանը հիմնվելով Լաստիվերտցու տեղեկությունների վրա, գաղթի թվականը դնում է 1020—1021-ին (Պատմ. Հայոց, Բ., էջ 903, և 1042)։ Օրմանյանը՝ Ծովիզի մահը գնում է 1023-ից՝ Պետրոս կաթողիկոսի շուր օրհնելուց հետո («Ազգապատում» Ա, 1205—1206)։

3 Ամասիա գտնված ձեռագիր երազահանից հանված մի ժամանակագրության մեջ գրված է. «Սենեքերիմայ գայն ի Սեբաստիայ թուին ՆԿԷ (1018). «Դիւան Հայոց պատմ.», Ժ. հատ., էջ 101։ Այս «ժամանակագրությունը» վերջանում է 1697 թվականով։

4 Հ. Մանանդյան— «Հայաստանը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», էջ 25։

5 Այսպեղ ուշագրավ են հատկապես հետևյալ երկու կետերը, ա) ըստ Լաստիվերտցու, ինչպես վերևում տեսանք, Դավիթն անվանվել է նաև Սեներերիմ. բ) Սենեքերիմ Արծրունի ուներ «արքա» տիտղոս և դժվար թե Վասիլը նրան ստորացներ՝ նրա ունեցած պատվանունից ավելի ցած աստիճանով։ Պատրիկ տիտղոսը ավելի շուտ հարմարվում է Դավթին, քան նրա հոր՝ Սենեքերիմին։

Բացի այս, Կեղրենոսի պատմածը ճիշտ չէ նաև այն բանով, որ Վասպուրականից դուրս եկած գաղթականությունը, «չորեքտասան հազար արամբք, թող զկանայս և զմանկտիս» (Թովմա Արծրունի, էջ 308) չէր կարող դեկտեմբեր, հունվար և փետրվար ձմռան ամիսներին Վասպուրականից դուրս գալ, կտրել Տավրոսի լեռնաշղթան Աղձնիքում և Զորրորդ Հայքում, և հասնել Սեբաստիա։ Դա մի չմտածված և կորստաբեր քայլ էր գաղթականության համար, որ ցանկանում էր իր կյանքն ապահովել օտարության մեջ։ Նման քայլ կարելի էր անել միայն այնպիսի պարագային, երբ անմիջականորեն բնաջնջվելու վտանգը կախված լիներ հայ ժողովրդի գլխին։

Հայտնի է սակայն, որ այդպիսի սպառնալիք գոյություն չուներ, որովհետև նախ՝ երկրում կար բավական կանոնավոր հայկական բանակ, երկրորդ՝ որ նախքան գաղթականության դուրս գալը, Վասպուրականի արևելյան սահմանները բռնված են եղել հունաց զորքի կողմից (Թ. Արծրունի, էջ 308)։

Եվ հենց այս վերջին հանգամանքի շնորհիվ է, որ երկրի աղդաբնակության որոշ մասը չի գաղթել, և հետագայում դիմադրություն է կազմակերպել թուրքերի դեմ (Թ. Արծրունի, էջ 310—312)։

Բացի այս, կա նաև մի ուրիշ պարագա. Սենեքերիմի բանագնաց որդին ամենաշուտ՝ 1016-ից հետո է, որ բազմաթիվ հետևորդներով դուրս է եկել երկրից Պոլիս գնալու համար։ Եթե սրա վրա ավելացնենք նաև բանակցություններն ու գաղթի պատրաստությունը, ապա պարզ է, որ այդ բոլորի համար բավական ժամանակ անցած կլիներ, մինչև գաղթականության դուրս գալը։

Այս պարագաները հաստատում են, ըստ իս, որ նախ, Վասպուրականի գաղթը ձմեռ ժամանակ չէ կատարվել, հետո՝ որ Կեղրենոսի տված 1016 թվականը ճիշտ չէ։

Իմ կարծիքով, Վասպուրականի գաղթի իսկական տարեթիվը պիտի որոշել Բագրատունի Գագիկ Ա թագավորի որդի Աշոտն՝ իր եղբայր Հովհաննես-Սմբատի դեմ՝ Սենեքերիմ Արծրունուց ռազմական օգնություն ստանալու խնդրով (Ուռհ., էջ 8)։

Գագիկի մահը, պատմաբանների ցարդ ընդունածի համաձայն, տեղի է ունեցել 1020 թվականին։ Ուրեմն, Աշոտի Վասպուրական գնալը կատարվել է Գագիկի մահից հետո, և այնպիսի ժամանակ, երբ Սենեքերիմը տակավին չէր գաղթել և հնարավորություն ուներ օգնելու Աշոտին։

Ըստ իս, Վասպուրականի գաղթի իսկական թվականը պետք է համարել 1021 թ., որպիսին ունեն Թովմա Արծրունին և Դիվրիկի հիշատակարանը, որոնք որպես տոհմական տվյալներ, անկասկած ավելի ճիշտ են պահել հարկ եղած տեղեկությունը։

Հայ գաղթականությունը Սեբաստիայի շրջանում տեղավորվելուց հետո, այնտեղ հիմնում է Ակն և Արաբկիր քաղաքները և մի քանի վանքեր (Չամչյան, Բ հատոր, էջ 903, և Գ. Սրվանձտյան, «Թորոս ախպար», Ա, էջ 234—235՝ Դիվրիկի հիշատակարան)։

Սենեքերիմը տակավին ողջ էր, երբ Վասիլի դեմ ծագում է մի ապըստամբություն՝ բյուզանդական ղժգոհ իշխանների կողմից՝ գլխավորությամբ Փոկաս-Բարդասի որդի Նիկեփոր Ծովիզի։ Այդ ապստամբության մասնակցում է նաև Սենեքերիմի որդի Դավիթ Արծրունին։ Վերջինս, սակայն

շուտով զղջալով, սպանում է Ծովիդին 1022 թվին (Ուռհայեցի, էջ 51, Լաստիվերտցի, էջ 21, Զամչ. Պատ. Հայոց Բ., 908)։

Նիկեփոր-Ծովիդի սպանությունից հետո, ապստամբության մասնակիցները ցրվում են և խռովությունն ինքնին վերանում է (Լաստիվերտցի, էջ 21)։

Վասիլը գնահատելով Դավիթ Արծրունու այս հավատարմությունը, Կեսարիա, Ծամնդավ և Խավատանք քաղաքները՝ պարգև է տալիս նրան (Ուռհ., 51)։

Այս դեպքերից հետո, ծերունի Վասիլ կայսրը հրաժարվում է գահից, իրեն փոխարեն կայսր գնելով իր եղբայր Կոստանդինին, որին և հանձնարարում է Սենեքերիմի որդիներին և հայ ժողովրդին ջնոգ տանել։ Վասիլը մեռնում է 1025 թվականին, ըստ Վարդանի 1024-ին՝ (էջ 126)։

Սրանից մի քանի տարի հետո Սենեքերիմը հիվանդանում է, նրան այցելության է գալիս Պետրոս կաթողիկոսը (Զամչյան, Բ հատոր, էջ 909)։ Նույն հիվանդության հետևանքով էլ, Սենեքերիմը մեռնում է, ըստ Ուռհայեցու 1029 թ. (էջ 55), ըստ Զամչյանի 1026 թ.[2] (Բ. հատոր, էջ 909), ըստ Դելցերի՝ 1027-ին (Համառոտություն Բյուզանդական կայսրների պատմության, էջ 263)։

Սենեքերիմի մարմինը, համաձայն իր կտակի, փոխադրվում է Վասպուրական և թաղվում Վարագի վանքում (Ուռհայեցի, էջ 55)։ Նրա գերեզմանաքարի վրա դրված է.

«Այս է հանդիստ Սենեքերիմ թագավորի ԴԾՀԸ» (1029) (Ազգագրական հանդես, XXI դիրք, էջ 62, 1911 թ.)։

Սենեքերիմի մահից հետո, իշխանությունն անցնում է նրա մեծ որդի Դավթին, որ «էր այր փառաւոր և պատուական և անարկու ի վերայ երկրի» (Ուռհ., էջ 55)։

1035 թվականի մոտերքը, իշխելով 10—12 տարի, մեռնում է «արքայն» Դավիթը առանց արու ժառանգի։ Նրա իշխանությունն անցնում է իր Ատոմ եղբորը (Ուռհ., էջ 65։[3])

Դավթի աղջկա հետ ամուսնանում է Բագրատունի դահագուրկ թագավոր Գագիկ Բ-ը, որ Դավթի մահվանից հետո ժառանգում է նրա բաժին կալվածները (Լաստիվերտցի, էջ 62)։

Դավթի կալվածների ժառանգության խնդրով, Ուռհայեցու և Լաստիվերտցու տված տեղեկությունների մեջ երևցած այս անհամաձայնությունը սակայն վերանում է, եթե Լաստիվերտցու խոսքերից՝ հետևցնենք, թե Դա-

---

1 Թվում է, թե Դավթի մահվանից հետո, հույներն իրենց տված այս նվերներից՝ Ծամբնդավը ետ են վերցրել, որովհետև երբ Կարսի թագավոր՝ Աբասի որդի Գագիկը վախենալով սելջուկներից, Կարսը տալիս է հույներին և ինքը տեղափոխվում է հունաց բաժին, բյուզանդական իշխանությունը Կարսի փոխարեն նրան է հանձնում վերոհիշյալ Ծամնդավ ամրոցը (Ուռհայեցի, էջ 151)։

2 Ըստ Ուռհայեցու՝ Վասիլը և Սենեքերիմը մեռնում են միևնույն 1029 թվականին։ Վասիլի մահվան թվականը— 1025-ն է (Դելցեր, էջ 264), ուրեմն Սենեքերիմի մահն էլ ընկնում է 1025-ին, որը մի տարով է տարբերվում Վարդանի տված 1024 թվականից։

3 Ինչպես էլ Ուռհայեցին մեծացնի Դավթի դիրքը, անվանելով նրան արքա, պարզ է, որ Սենեքերիմի որդիները օտար հողի վրա եղել են պարզ տոհմապետներ, որոնք դեռ մի քանի տարի պահել են իրենց իրավունքները Սեբաստիայի շրջանում։

վիճը Սեբաստիայի շրջանից որոշ մաս, իբր իր բաժին, իր աղջկան ոժիտ է տվել, որին և տիրում է Դավիթ Բ-ը։

1040 թվականի մոտերքը, Արծրունի ազատներից մեկը բյուզանդական իշխանությանը հաճելի լինելու նպատակով, դրդարտում է Սենեքերիմի որդիներին՝ Ատոմին ու Աբուսահլին, որպես թե նրանք ցանկանում են ապստամբել հունաց դեմ։ Միքայել կայսրը հավատալով այս քսությանը, մի զորավարի առաջնորդությամբ 15 հազար զորք է ուղարկում՝ Ատոմին և Աբուսահլին բռնելու և Կոստանդնուպոլիս տանելու համար։

Այս դեպքը շատ է զայրացնում Արծրունի զորավար Շապուհին, որն առաջարկում է իր իշխաններին՝ կռվի դուրս գալ հունաց դեմ։ Ատոմն ու Աբուսահլը սակայն, ավելորդ են համարում այդպիսի քայլ, նրանք ներկայանալով հույն զորավարին, գնում են Պոլիս։ Այնտեղ, հայ իշխանները հաստատելով իրենց անմեղությունը ետ են վերադառնում։ Պատմիչ Ուռհայեցին ասում է, որ կայսրը դավաճանին պատժել է (Ուռհ., էջ 82—83)։

Այնուհետև, Արծրունի եղբայրների մասին խոսք է լինում այն առթիվ, երբ սելջուկյան Տուղրիլ բեկի հրոսակները 1059 թվականի մոտերը հարձակվում են Սեբաստիայի վրա, նպատակ ունենալով՝ «ձերբակալ առնել զորդիս Սենեքերիմայ... զԱտոմ և զԱբուսահլ»։

Վերջիններս փախչում են Խավատանք ամրոցը։ Սեբաստիան անպաշտպան մնալով, զրավվում է թուրք հրոսակներից։ Ութն օր ավերվում, թալանվում է քաղաքը և բնակիչները կոտորվում ու գերի են տարվում և «եղև Սեբաստիա իբրև խուզ մի այրեցեալ հրով» (Ուռհայեցի, էջ 133—135)։

Պետրոս Գետադարձ կաթողիկոսի մահից (1053) հետո (Չամչ., Բ, 968), կաթողիկոս է նստում նրա քրոջ որդի Խաչիկը։ Հույները ցանկանալով վերջ դնել, ինչպես հայկական թագավորության, այնպես էլ կաթողիկոսության, Խաչիկին Պոլիս են կանչում և երեք տարի աքսորում են պահում նրան։ Դավիթ Բ Բագրատունու և Ատոմ ու Աբուսահլ իշխանների ջանքերով հազիվ ուրեմն բյուզանդական իշխանությունը ազատում է Խաչիկին իր երկիրը վերադառնալու համար (Ուռհ., էջ 137—138)։

Մի քանի տարի հետո բյուզանդական նեղմիտ կայսրը և մոլեռանդ կղերականությունը ցանկանալով դավանաբանական հալածանքներ սկսել հունական բաժնում, բայց մանավանդ Սեբաստիայի հայ գաղթականության դեմ, նախ Պոլիս են կանչում Արծրունի եղբայրներին և պարտավորեցնում վերջիններիս ընդունել «երկաբնակ» վարդապետությունը։

Արծրունի իշխաններին օգնության է հասնում Բագրատունի Դավիթը, և իր ճարտասան լեզվով ու գիտությամբ պաշտպանում է հայկական դավանությունը։ Հույները լռում են և Արծրունիներին վերադարձնում Սեբաստիա (Ուռհ., էջ 179)։

1059 թվականի մոտերը, սելջուկ Կտրիճ անունով մի էմիր, ապստամբելով սելջուկների դեմ, դալիս է կայսրության սահմանները և Սեբաստիայի շրջանում կռվում է հայ իշխանների դեմ։ Հաղթում է նրանց, և գերի վերցնելով նրանց տանում է Պոլիս կայսրի մոտ (Ուռհ. էջ 192—193)։

Այս դեպքն առիթ բռնելով, հույները զրպարտում են հայերին, որ իբր թե հիշյալ պատերազմի ժամանակ, թուրքերից ավելի հայերն են հույներին կոտորել։ Հայերը Դիոժեն կայսրի վրեժխնդրությունից ազատվում

են միայն մի քանի հույն իշխանների, բայց մանավանդ Կորիճ Էմիրի միջամտությամբ (Ուռհ., էջ 198—199)։

Այս բոլորը ցույց է տալիս, որ Վասիլի մահվանից հետո, բյուզանդական իշխանությունը շատ վատ է տրամադրվել Սեբաստիայի հայ գաղթականության վերաբերմամբ, և ամեն կերպ հալածանքների է ենթարկել նրան։

Նույնիսկ Սեբաստիայի և այլ շրջաններում հայերի թիվը նվազեցնելու նպատակով, հույն զորավարները շատ հաճախ լքել են պատերազմը, իրենց բանակներով հեռացել են երկրի ներսերը և հայ ժողովրդին անպաշտպան են թողել սելջուկ հրոսակների դեմ։

Վերջին անգամ, 1079 թ. Արծրունի եղբայրները՝ Ատոմն ու Աբուսահլը հիշվում են Ուռհայեցու գրքում, երբ նրանք մի քանի հայ իշխանների հետ գնում են Կիլիկիա բերդի վրա, Գագիկ Բագրատունուն Մանդալյան եղբայրների ձեռքից փրկելու համար, բայց ոչինչ չկարողանալով անել, ետ են վերադառնում (Ուռհ., էջ 220)։

Այս դեպքից հետո, Գագիկ Արծրունու սերունդն այլևս պատմության մեջ երևան չի գալիս։[1]

Սակայն Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ գտնվում է մի տեղեկություն, ըստ որի Ռուբինյան հարստության հիմնադիր Ռուբենը Գագիկ Արծրունու սերնդից էր, մինչդեռ նա (Ռուբենը) միշտ էլ համարվել է Բագրատունի, որպես Գագիկ Բ-ի հարազատներից մեկը։

Գանձակեցին (էջ 94—95) պատմելով Գագիկ Բ-ի դավաճանական մահը, հայտնում է, որ նրա հետ եղել է մի «մանուկ» (առանց դրա անունը տալու), որը մեծանալուց հետո, տիրում է այն բերդին, որտեղ սպանվել է Գագիկ Բ-ը։ Այս երիտասարդը՝

«Առ սակաւ սակաւ աճեցոյց զկալուած իւր, զսր բռնութեամբ, և զոր պատրանօք, մինչև տիրեաց նաև որդիք իւր, և թոռունք աշխարհին Կիլիկեցւոց, քաղաքաց և գաւառաց։ Սա է նախնին թագաւորին Լևոնի, որ ընդարձակեաց զսահմանս իւր քաջութեամբ, զոր յիւրում տեղւոջն ասասցուք» (էջ 95—96, Ղուկ. մատեն.)։ Ապա Ռուբինյան իշխանների՝ Թորոսի և իր եղբայր Ստեփանի մասին ասում է. «Այս Թորոս իշխան և եղբայր իւր Ստեփանէ որդիք էին իշխանին Լևոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, թոռունք յառաջագոյն ասացելոյ առնն, որ յազգականութենն և ի գաւակացն Գագկայ Արծրունեաց,[2] սոքա ընդարձակեցին զսահմանս իւրեանց քաջութեամբ...» (էջ 101)։

Ռուբենի Արծրունի ցեղին պատկանելու մասին, գրեթե նույնպիսի տեղեկություն է տալիս նաև Միխայել ասորի պատմագիրը, այսպես.

«Ընդ այն ժամանակս (ՇԾԷ=1108) արքայազունքն Հայոց, որ յաւուրս Վասլի կայսեր եկեալ էին ի Վասպուրականէ և ընակեալ ի Սեբաստ

---

1 «Դիվան Հայոց պատմության», գիրք Ժ, էջ 384—385.— ԺԹ դարի ժամանակագիր Հովհաննես Սեբաստացին՝ Սեբաստիայի Ս. Նշան վանքի առաջնորդ Խաչատուր արքեպիսկոպոսի ժամանակի մասին (1064—1095) ասում է. ... Յաւուրս սորին ի միում ամի մեռանէին Ատոմ արքայ Սենեքերիմեան, և եղբայր նորին Աբուսահլ, որով բարձաւ թագաւորութիւն Արծրունեաց, և ամենեին անծանօթ եղև կարգ ազգի նոցա, ՇԻԹ (1080)։

2 Ընդգծումներն իմն են։ Ս. Շ.։ «Միսուանք, էջ 14 կարդում ենք՝ «որ յազգականութենէ և ի զորայն Գագկայ՝ Արծրունեաց»։

և ի Կեսարիա և ի Խաւտունէքն, և բոնացեալ ունէին զբաղում տեղիս, մտին յերկիրն Կիլիկեցւոց։ Ոմանք ի նոցանէ Ռոբինեանք կոչեցեալք, որք էին յերկուց մեծամեծաց զարմից, Հայկազունք և Սենեքարիմեանք, խնամութեամբ խառնեալ ընդ միմեանս, որք թագաւորեցին ի Վասպուրական յորժամ և Բագրատունիքն թագաւորեցին ի մեծ Հայք, և այժմ սկսան տիրել երկրին Կիլիկեցւոց, և թագաւորեալ արիական քաջութեամբ Ռոբեն նախ և Կոստընդին և Լևոն և Թորոս, և այլքն մի ըստ միոջէ» (Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի ասորւոց պատրիարքի», Երուսաղեմ, 1871, էջ 411)։[1]

Քննելով մեր մյուս պատմագիրների Ռուբենի մասին հաղորդածները, նրանց մեջ մենք Կիրակոսի և Միխայել ասորու ասածներին գոնե հակառակ ոչինչ չենք գտնում։

Սամուել Անեցին Դագիկ Բ-ի մահը պատմելուց հետո ասում է. «Իսկ իշխանքն Հայոց և ամենայն զօրք նոցա լքան և յամենայն տեղիս ցրուեցան, յորոց իշխան մի արեանաոու Դագկայ՝ Ռուբէն անուն՝ որ կալեալ ունէի զԿոսիտաոայ բերդն...» (էջ 116)։

Վարդանը գրում է.

«Ի հինգ հարիւր քառասուն ութ թուին, մեռաւ Կոստանդին՝ մեծ իշխանն Հայոց, որդի Ռուբենայ, որ է հարազատ Դագկայ արքայի» (Վարդան, էջ 148, Մոսկվա)։

Վահրամը պատմելով Դագիկի մահից հետո, հայ իշխանների այս ու այն կողմը ցրվելը, ասում է.

«յորոց իշխան ոմն պատուեալ,
արեանաոու՝ Դագկայ եղեալ,
Ռուբեն անուն վերաձայնեալ,
զԿոսիտաոայ ամրոց կալեալ» (էջ 192)։

Ուրեմն, ըստ վերոգրյալ վերջին երեք պատմագիրների, Ռուբենը Դագիկին հարազատ, «արյունաոու» մեկն է եղել։

Այս պարագան, սակայն երբեք չի ենթադրում, որ Ռուբենը Բագրատունի էր, որովհետև Արծրունի Ռուբենն էլ նույնչափ հարազատ և արյունաոու կարող էր լինել Դագիկին, որքան և մի ուրիշ Բագրատունի։[2] Հայտնի է, որ Բագրատունի և Արծրունի տների մեջ խնամիական կապեր միշտ եղել են։ Աշոտ Ա-ի աղջիկ Սոփին կինն էր Գրիգոր-Դերենիկ իշխանին (Դագիկ Արծրունու հոր), Սենեքերիմ Արծրունու կին Խուշուշը Դագիկ Ա-ի աղջիկն էր, որով և Դագիկ Բ-ի հորաքույրը։ Դագիկ Բ-ը ամուսնացավ Դավիթ Արծրունու աղջկա հետ, և իր տղայի համար կին ուզեց Արծրունի Հոյուծ կամ Խուլ Խաչիկի սերնդից մի աղջիկ (Ուռ., էջ 219, Վարգան, էջ 141, Մոսկվա)։

---

1 Ինձ թվում է, թե Միխայել պատրիարքի «Ժամանակագրութեան» ասորական բնագրում Հայ իշխանական տոհմերի մասին տեղեկություններ չէին կարող լինել։ Ըստ իս, Արծրունիների, Բագրատունիների և Ռուբինյանների վերաբերմամբ գտնված վերոհիշյալ ցուցմունքները հայ հին թարգմանչի հավելումներն են, որով և ավելի ևս արժեքավոր են դառնում հատկապես Ռուբենի ծագման մասին եղած գրվածքները։

2 Վենետիկի հրատարակությունն ունի՝ «որ էր յաղատաց Դագկայ արքայի» (էջ 111)։

3 Ռուբենի ծագման մասին կարդալ նաև Ալիշանի «Սիսուան», էջ 43—44։

Կա նաև մի այլ երկրորդական կետ։ Ռուբեն և Կոստանդին անունները Բագրատունիների մոտ չենք հանդիպում, իսկ Արծրունի Սենեքերիմի որդիներից մեկը կոչվում էր Կոստանդին (Ուռհ., էջ 55)։

Թվում է, թե այս անձնավորությունը շուտ է մահացել, որովհետև Դավիթ Արծրունու մահից հետո, գործում են միայն նրա մյուս եղբայրները՝ Ատոմն ու Արուսանը, իսկ Կոստանդին անունը չի հիշատակվում։

Չի կարելի ենթադրել, որ Ռուբենը վաղամեռիկ Կոստանդինի որդին է և ինքը Ռուբենը իր հերթին իր տղային անվանեց Կոստանդին։ Գապի անունը թոռան վրա դնելը սովորական մի երևույթ է հայերի մեջ։ Եթե ճիշտ լինի իմ այս ենթադրությունը՝ այդ պարագային՝ Ռուբենը կլինի Գագիկ Բ-ի հորաքրոջ թոռը։

Ուշն Ռուբենը փոքր հասակից անհայր մնալով, սրդեղրվել է իր հորեղբոր՝ Դավթի կողմից, որի աղջիկը Գագիկի հետ ամուսնանալուց հետո, հետն է տարել իր հորեղբոր տղային, որպիսի հանգամանքով՝ Արծրունի իշխանիկ Ռուբենը կարող էր Գագիկի հետ լինել, որպես նրա զրանիկներից մեկը։

Ռուբինյանների ծագման խնդրի վերաբերմամբ այս չափով միայն բավականանալով, այժմ մի քանի իսոք էլ ասենք զաղթից հետո Վասպուրականի դրության մասին։ Ինչպես նախորդ էջերումն էլ ասվեց, Հայաստանի այս նահանգը ամբողջովին չդատարկվեց հայերից. այստեղ մնաց դղալի քանակությամբ ժողովուրդ և ազատանի։ Վասպուրականի վանքերը հույներին չէին տրված, այլ՝ մնում էին հայ իշխանների և կղերի հսկողության և տնտեսման ներքո։[2]

Սենեքերիմի զաղթից հետո Վասպուրականը ենթարկվում է բյուզանդական իշխանության։ Վասիլ կայսրն այնտեղ ուղարկում է ընդհանուր կառավարիչ Նիկեփորոս Կոմենոս անունով մի մարդ, կողմնապահ իշխաններ և զորք։ Շուտով Նիկեփորոսը դրավում է Արճեշ քաղաքն իր շրջականներով (Զամչ. Պտմ. Հայոց, Բ, էջ 903)։

Վասպուրականի և նրա մերձակա զավառների երկրորդական քաղաքները՝ Արճեշ, Մանազկերտ, Բերկրի, Խլաթ բյուզանդական իշխանության տերիտորիայի մասն են կազմում, իսկ նրանց մահմեդական էմիրները Բյուզանդիայի վասալներն են դառնում (Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, էջ 263)։

Սակայն, այդ մահմեդական ֆեոդալները այնքան էլ հարգանքով չէին վերաբերում դեպի բյուզանդական իշխանությունը, և առիթ ներկայացած ժամանակ, ապստամբում էին։

1038 թվի մոտերը Վասպուրականի հույն կառավարիչ Նիկողոս-Կավասիլասը Բերկրին իր շրջականներով զրավում է նրա ֆեոդալ մահմեդական էմիր Խտրիկից, և վերջինիս բանտարկում նույն բերդում, հսկիչ դնելով մի հույն զորախումբ։ Բերկրիում, անասունների կելի պակասության

1 Գիտենք, որ Դավիթը արու զավակ չուներ։

2 Այս իրողության որպես փաստ կարելի է ցույց տալ հետևյալը. երբ Բագրատունի թագավոր Հովհաննես Սմբատի և Պետրոս կաթողիկոսի հարաբերությունները վատացան, Պետրոսը գաղտնի կերպով թողեց Անին և անցնելով Վասպուրական (1037 թ.), չորս տարի ապրեց Վանտոսպի Ջորովանք կոչված մենաստանում (Ուռհայեցի, էջ 75—76, Սամուել Անեցի, էջ 107)։

պատճառով, այդ պահակախումբը թողնում է Բերկրին և գնում է Արծակի (Ներկայիս Արճակ) խոտաոատ գաշտը, բերդը թողնելով առանց պահպանության։

Այս առիթից օգտվելով, շրջակա էմիրները գրավում են Բերկրին, Խտրիկին բանտից հանում և կոտորում են հայ և հույն բնակչությունից մոտ 24 հազար մարդ (Զամչ., Պատմ. Հայոց, Բ, էջ 917, Լաստիվերտցի, էջ 40—41, 1912 թ., Թիֆլիս)։

Այս բանը տեսնելով Դանձի անուն մի հայ իշխան, հույն և հայ զորքերով հարձակում է գործում Բերկրու վրա, Խտրիկ և մի քանի մահմեդական էմիրներ մնում են պաշարված բերդում։ Մի քանի օր հետո, զարձյալ շրջակա էմիրները գալիս են պաշարվածներին օգնության, և որովհետև բերդը պաշարող հայ և հույն զորքը կեր ու խումով էր զբաղված, հանկարծակի նրանց վրա են հարձակվում, սպանում Դանձիին և կոտորում զորքը (Ուռհ., էջ 75)։

Միքայել կայսրը տեղեկանալով այս դեպքերի մասին, հաջորդ տարին նոր կառավարիչ ու զորք է ուղարկում Վասպուրական, որոնք գրավում են Բերկրին (Զամչ. Բ, էջ 918, Լաստիվերտցի, էջ 42)։

1042 թվականին, Հերի և Սալմաստի մահմեդական բնակիչները (գուցե զելմիկներ), մտնում են Վասպուրականի Թոռնավան կոչված գավառը, և երկիրն ավերում։ Այդ գավառի տերն էր ծերունի Խուլ Խաչիկը (որ կոչվում էր նաև Առյուծ)։ Խաչիկը թշնամու դեմն է գնում հաղիվ 70 մարդով, որովհետև իր որդիները՝ Ճնճղուկն ու Հասանը իրենց զորաբանակով Բյուզանդիայում, կայսերական ծառայության մեջ էին գտնվում։

Կռվում, Խաչիկը մեծ քաջագործություններ անելուց հետո, սպանվում է իր 15 տարեկան Իշխանիկ կոչված որդու հետ։ Հետագայում՝ Առյուծ-Խաչիկի որդիները՝ վերոհիշյալ Ճնճղուկն ու Հասանը[1] Բյուզանդիայից ետ գառնալով, ջարդում են Հերի և Սալմաստի զորաբանակը և իրենց հոր ու եղբոր վրեժը հանում (Ուռհ., էջ 90—92)։

Այս օրերին Վասպուրականում գործել է նաև հայտնի մատենագիր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին։ Իր գրած ՀԳ (73)-րդ նամակում Մագիստրոսն իրեն անվանում է.

---

1 Այս Հասանի որդին Աբլղարիրը բյուզանդական Ալեքս կայսրի կողմից մեծ պատիվների և պաշտոնի էր արժանացել։ Մի ձեռագիր հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «Թուին ՌԼԹ (1190), այր ոմն յիշխանացն Հայոց Ապլղարիպ անուն, ... ի տանէն Վասպուրականի իրրև մտերիմ և արի ի գործ պատերազմին ուռարեցաւ յինքնակալն Ալեքսէ ի գաւառն Կիլիկեցւոց իշխել մայրաքաղաքին Տարսոնի և Մամեստիոյ, որ եկեալ տիրէր սոցա հայրենի կարգօք և աւրինաւք...» (Գ. Հովսեփյան, «Աղբյուրներ կամ Պոռչյանք», Բ. հատոր, էջ 249, ձեռագիր, Պետհամալսարան)։

Վարգանը գրում է, որ Անիի տեր Գագիկը «... զորդին իւր կրտսեր տայ ի փեսայութիւն Ապլխարիր որդւոյ Խաչկայ՝ իշխանին Վասպուրականի, որ ընդ ձեռամբ ունէր զՍիս, զԱտանայ, զՊապաւօն, և զՀամբրոն...» (Վարդան, էջ 141, Մոսկվա)։

Ուռհայեցին գրում է.

«Յայսմ ժամանակիս Գագիկ արքայ Հայոց վառեալ զգունդ զօրաց իւրոց և գնաց էր ի Տարսոն քաղաքն առ Ապլղարիպն իշխանն Հայոց՝ որդւոյ Հասանայ՝ որդւոյ Խաչկայ Խլին՝ առն քաջի ի Վասպուրական գաւառէ։ Սա գնացեալ առ Ապլղարիպն սիրոյ աղագաւ, որ վասն իշխամութեան կոչեալ էր զԳագիկ՝ Ապլղարիպայ, և յաղագս պատճառի ինչ ոչ եղև գործ խնամութեան, և դարձաւ Գագիկ որպէս զառիւծ մռնչելով» (էջ 219, Վաղարշապատ)։

«...Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջազետաց տէր և Մօնումախին Մագիստրոս, վեստ և տուկ.»։

Իսկ ԻԱ (21)-րդ թղթում հետևյալն է ասում.

«Այլ դու, ...աղէ՛ հարցիր, ընդ բոլոր Յարեթեան նահանգի, զինչ յաւուրս յայսոսիկ ի բոլոր տանս մարդպետական եղեալ գործառնութիւնս՝ ի քաղաքս, և ի դղեակս, յաւանս և ի գիւղս, յանապատս և ի պատս, ի բոլոր տնօրինական առաջարկութիւնս կամ ի հարաւային բանուքեանն խաղաղանալս...»։

Վերևի իմ կողմից ընդգծված տողերը ցույց են տալիս, որ Դր. Պահլավունին բարեկարգիչ խոշոր գործունեություն է ծավալել Մարդպետականի (Վասպուրականի զավառներից մեկի՝ Մարդաստանի)[1] գյուղերում, ավաններում և շեներում։

Պահլավունի իշխանը պատերազմելով հարավային բռնության (արաբացիների, թուրքերի) դեմ, նպաստել է Վասպուրականի, որով և Հայաստանի խաղաղության գործին։

Դժբախտաբար Ր. Մագիստրոսը համաձայն իր սովորության, այնպիսի սղարան ձևով է արտահայտվել, որ մեր ժամանակի ընթերցողն առանձին բացատրություններ և մանրամասնություններ չի գտնում վերոհիշյալ տողերում։

Դժվարություններ նրանումն է հատկապես, որ մեր պատմիչները Դր. Պահլավունու այդ ժամանակների գործունեության մասին, բացառությամբ Տուղրիլ-բեկի զորավար Իբրահիմի դեմ եղած պատերազմի (1049 թ.), կատարելապես լռություն են պահանում, և այդ զուցե դիտավորյալ կերպով, համարելով նրան Բագրատունի իշխանության տապալման օղնողներից մեկը (Ուռ., էջ 102—107, Լաստ. էջ 86—88, Վարդան, էջ 133—134)։

Այս, ինչպես նաև վերևում՝ Լաստիվերտցուց և Ուռհայեցուց վերցված տեղեկությունները չեն գտնվում Թ. Արծրունու Պատմության մեջ։ Այս պարագան բացատրվում է նրանով, որ ինչպես հոդվածիս սկզբում էլ ասվեց, Թ. Արծրունու այս մասի շարունակողը գրել է 1121 թվականից ավելի ուշ ժամանակում։

Իսկ Արծրունին մեզ տեղեկացնում է, որ սելջուկների Անին գրավելուց հետո,[2] կամ նրա հետ միաժամանակ, Ատրպատականի թուրքերը իրենց Սրահանգ՝ անուն առաջնորդի ղեկավարությամբ մտնում են Վասպուրական, ավարի են մատնում երկիրը, գրավում են Վան և Արճեշ քաղաքները և ժողովրդին գերում ու կոտորում։

---

1 Տե՛ս Լեո, «Հայոց պատմություն», I հատ., էջ 176։

2 Ըստ Թ. Արծրունու, Անին գրավել է Տուղրիլ բեկը, այս պատմությունը ճիշտ չէ իհարկե։ Անին տիրեց Ալփասլանը 1064 թվին։ Վրաց պատմիչ Ջուանշիրն ասում է, որ Ալփասլանի որդի Մելիք-Շահը (1072—1092) տիրեց Վրաստանի մի կարգ տեղերին և Դանձակում իրեն փոխարեն կարգում է մի էմիր՝ Սրահանգ անունով (էջ 114)։

3 Իմ կարծիքով Վասպուրականն ավերող Սրահանգը և Դանձակի էմիր Սրահանգը միևնույն մարդը կարող է լինել։

4 Մի հիշատակարանում պահպանվել են տեղեկություններ Վասպուրականի մասին։ Հիշատակարանում կարդում ենք՝ «եւ գրեցաւ ի ՇԿԷ Մուսկանիս հայոց ի գեղս, որ կոչի Մարմետ, ընդ հովանեաւ սուրբ գերեզմանի վարդապետին Թադէոսի, ի հայրապետութեանն Տեառն Դաւթի Հայոց կաթողիկոսի ի վասպ...., յորում կայր և այլ կաթողիկոս ի ներքին երկրին, մերձ ի յԱնտիոք. արդ, ՆՔԷ ո՞ր ճշմարիտ է, կամ ո՞ր սուտ, զայն Աստուած դիտէ.— և ի

Միայն Ամյուկ[1] բերդում և Աղթամար կղզում կազմակերպվում է դիմադրություն, Արծրունի Խեղենիկյան սերնդից Աբղլմսեհ անունով մի իշխանազնի ձեռքով։

Ըստ Արծրունու, Խեղենիկյան սերնդաբանությունը հետևյալ ճյուղավորությունն ունի.

Մեծ իշխան Խեղենիկ, որ Սենեքերիմ Արծրունու աղդակիցն է եղել։ Նրա որդիներն են՝ Թոռնիկ՝ «այր հզօր և պատերազմողա», Դավիթ, Ստեփանոս և Գրիգոր։ Այս վերջին երեք անձնավորությունները կղերականներ են եղել։ Թոռնիկից ծնվում է «մեծ իշխանա Թադեոս «այր ընտիր ի գործ պատերազմի», Թադեոսի որդին է Թոռնիկ, որ նահատակվում է Մոկսի Ատիճանս գյուղում։ Թոռնիկից ծնվում է վերևում հիշված Աբղլմսեհը (էջ 311), Աբղլմսեհն ունենում է 7 տղա և 5 աղջիկ։ Ահա Խեղենիկյանների ծննդաբանական ծառը.—

Խեղենիկ

Թոռնիկ, Դավիթ, Ստեփանոս, Գրիգոր

Թադեոս
Թոռնիկ (նահատակ Մոկսում)
Աբղլմսեհ

Ալուզ կամ Ստեփանոս, Դավիթ կաթողիկոս ևս հինգ տղա հինգ աղջիկ

Խեղենիկ

Աբղլմսեհի ծննդյան թվականը հայտնի չէ, նա ապրել է 1097 թվականներում, երբ «եկին արիական ազգն ֆոռանգաց և աղատեցին զսուրբ քաղաքն Երուսաղէմ ի ձեռաց այլազգեացն[2] և զայլ ևս բազում աշխարհս ի թուին ՇԽԶ» [1097] (Թ. Արծրունի, էջ 311)։

բռնակալութեանս ազգիս իսմայելացւոց, յորում ամի եղև նշանք ահագինք յերկնէ և յերկրէ և յաւուց՝ ի կարմրանալ երկնից ի գոյն արեան և թուաթափումն աստեղացն յայտնի տեսանելամբք, և շարժմունք մի զմիոն կնի. և մեռանել սուլտանին, որ կոչէր Տաֆար, առն բարեբարոյ և խաղաղարարի և շինողի աշխարհի։ Եւ ապա զկնի այնր յաւելել ազգի վրա և թագավորութիւն ի թագավորութեան վրա, և ասպատակել անաւրէն ազգին իսմաելի, որ կոչի Թուրքման, և մականուն հարամիր, ի գեղապանծ գաւառս Վասպուրականի։ Եւ ըստ վաղուց որոշացեալ և հնացեալ կատաղութեանն իւրեանց, զոր ունին ի վերս խաչապաշտաց, նորոգեալ ի վերա Տոսպ գաւառիս՝ զրազումս անողորմաբար և առ ի պաշտուն մատուցանել կոտորեցին, թերևս թույլ տալով Աստուծոյ, վասն զի ոչ ամենեքեան, որ յիսրայէլէ են՝ նորա իսրայեղանք իցեն։ Բայց զառաջիկայն չգիտեմք, թէ զի՞նչ է լինելոց. զոր գթացեալ որդին Աստուծոյ պահեսցէ։ խաղաղութեամբ զեկեղեցի իւր սուրբ և փրկեսցէ յայս ի բազում և յանհուն տարակուսանացս, որ էմբ յանտանելի հարկապահանջութեան և յառի և յաւարի, բարեխաւսութեամբ սուրբ Աստուածնին և ամենայն սրբոց և կամարարաց իւրոց»։

Հիշատակարանը գրված է Վասպուրականի Մարմեռ գյուղում, Մուշի որդի Հովհաննեսի ձեռքով, Եսայի մարգարեի գրվածների մեկնության վերջում։

Այս հիշատակարանն առաջին անգամ հրատարակած է Կարապետ Եպիսկոպոսը «Արարատ» ամսագրում, 1913 թ., էջ 50։

1 Ամյուկ բերդը գտնվում է Վանա լճի արևելյան ափին, Առբերանի գավառում։

2 Խաչակիրները Երուսաղեմն ազատում են 1099 թ. հուլիսի 15-ին («Ազգապատում», Ա, էջ 1320)։

Թ. Արծրունու շարունակողն Աբղլմսեհին անվանում է «արքայ» և «(ս) պատառ կուրապաղատ», վերջին տիտղոսն անկասկած հունական աղդեցության նշան է։ Աբղլմսեհն ամուսնացել է Կոդովիտ և Մաղկոտն դավառների տեր՝ Ալուկի որդու՝ «Արևելյան դուկ» Դրիդորի Մարեամ անուն աղջկա հետ։

Թե ինչ դեպքեր են պատահել Աբղլմսեհի ժամանակ, հարձակումները որ կողմից են կատարվել, ինչպիսի հաղթություններ են տարել և կամ պարտություններ են կրել Խեղենիկյանները, ոչինչ պարզ չէ, որովհետև Արծրունու շարունակողը գրում է միայն ընդհանուր խոսքեր, նույնիսկ կանոնավոր ժամանակագրություն էլ չի տալիս։ Սենեքերիմի դաղթից հետո, կամ նույնիսկ Աբղլմսեհի և նրա որդի Ալուղի ժամանակ Վասպուրականում պատահած դեպքերի ոչ մի մանրամասն նկարագրություն չունի, միայն գովասանական ընդհանուր ֆրազներ է դործածում այս ու այն ներկայացուցչի վերաբերմամբ։

Ահա նրա նկարագրածից մի կտոր.

«Եւ տաղնապէր երկիրս արևելեայց ի ձեռաց անօրինաց, յարձակմանէ յարաժամ այլազգեաց, որ իբրև դյորձանս հեղեղաց յարձակէին ընդ երեսս երկրի, կամ իբրև դամպս սաստիկ շփոթեալս ի ճայթմանէ օդոց, և ի փայլատակմանց հրոյ ի ժամս մթացեալ դիշերոյ» (Թ. Արծրունի, էջ 311)։

Աբղլմսեհը հենվելով Ամուկ և Աղթամար բերդերի վրա, միշտ դիմադրություն է կազմակերպել թշնամիների հարձակման դեմ։ Նա միաժամանակ ինամակալ հայր է եղել ժողովրդի համար, որովհետև երկրից պահանջված հարկերի փոխարեն իր ստացվածներն էր վճարում։

Աբղլմսեհը մեռնում է 1121 թվականին (էջ 315), ունենալով 7 աղա և 5 աղջիկ (էջ 312)։

Ըստ պատմագրի տված տեղեկության, Աբղլմսեհի որդիներից մեկը՝ Դավիթը դեռ հոր ողջության, Աղթամարի կաթողիկոս է դառնում,[1] (1113 - 1165), իսկ ամենափոքրը՝ Ստեփանոս-Ալուղը հոր մահվանից հետո, ժառանգում է հայրենի իշխանությունը և կառավարում է Վասպուրականը։

Ալուղը հետևում է թշնամիներին սիրաշահելու քաղաքականության, «և հաշտեցուցանէր ընդ իւր գանհաչա թշնամիսն դաղդն Ելիմացւոց...» (էջ 316)։

Այսպիսի քաղաքականության շնորհիվ Ալուղին հաջողվում է Վասպուրականի հայ ժողովրդին մի կերպ պահել երկրում, հենվելով հատկապես Ամուկ բերդի ամրության վրա (էջ 317)։

Պատմության այս մասի գրողը ժամանակագրությունը չի հասցնում մինչև Ալուղի մահը, միայն հայտնում է, որ Ալուղն ունեցել է մի որդի Խեղենիկ անունով, որը մեծանալուց հետո կոչվել է նաև «Խեղենիկ արքայ»[2]

---

1 Վարդանը՝ Աղթամարի առաջին կաթողիկոս Դավթին անվանում է «Դաւիթ ոմն որդի Թոնկայ» (էջ 153, Մոսկվա, 1861 թ.)։ Ճիշտ չէ, Դավիթ կաթողիկոսը թոռն էր Թոնիկ Բ.-ի։

2 «Արքայ»։ մոնղոլական բառը նշանակում է «բրիստոնյա»։ Ըստ Ն. Ակինյանի, «այսանդ և այլուր պարզապես «արքայազուն», «յարքունական սերնդոց» իմաստով է, և չունի որևիցե (կրոնական) աղերս մոնղոլական «արքայուն» բառի հետ (տես «Դաւադանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ», էջ 33—34, ծանոթ. 1)։

Խեղենիկ արքայունի քաղաքական կյանքի մասին շատ քիչ տեղեկություններ ունենք շնորհիվ այն հանգամանքի, որ Խեղենիկը չի հոգացել այդ մասին տոհմային ժամանակագրության մեջ հիշատակումներ գրելու, գոնե այն չափով, ինչ չափով գրված է իր հոր՝ Ստեփանոս-Ալուզի և պապի՝ Արզրմսեհի համար։

Պատմագիրներից Վարդանն ասում է, որ սելջուկյան իշխան Սուքմանի թոռը Շահի-Արմենը (ըստ Չամչյանի՝ Միրան—[Շահը]—հտր. 3-րդ, էջ 47—48) 1130 թվականի մոտերը տեր է դառնում Ամուկ բերդին։

«Եւ [Շահի-Արմենը] էառ զԱմիւկ ի Հեսենկա և Սասունք ի Վիրենայ ամենայն վանօրէիւքն և պահէր ի խոր խաղաղութեան դամս վաթսուն» (Վարդան, էջ 162—163, Մոսկվա)։

Բացի այս, Շիրակի Հռոմոսի վանքի մի արձանագրության մեջ հիշվում են Ալուզի որդի Խեղենիկը և իր կին Մարջանը. ահա այդ արձանագրությունը։

«Ես Խէղէնիկս, որդի Ալուզի, և ամուսին իմ Մարջան տուաք ի սուրբ ուխտս զԹէզանոն շամբն, որ զեան ի մէջն կու անցանէ, որ Իշխանն մեզ էր տուել. տէր Բարսեղ և այլ եղբարքս սահմանեցին զտաւն սուրբ Կարապետին բոլոր յեկեղեցիքս պատարագել զԵրիստոս... կատարիչք զրիս աւրհնին ի Քրիստոսէ, ամէն ՈՂԴ (1245)»։[1]

Հավանաբար այս արձանագրության մեջ հիշված Ալուզի որդի Խեղենիկը Արծրունի Խեղենիկ-արքայունը լինի,[2] որովհետև նրա պապի՝ Արզրմսեհի մահվան թվականից՝ 1121-ից մինչև արձանագրության 1245 թվականը՝ անում 124 տարի, որը եթե բաժանելու լինենք Ալուզի[3] և Խեղենիկի վրա, ժամանակագրական գծով զրեթե դժվարության չենք հանդիպի։

Ընդունելով, որ արձանագրություն գրողը Արծրունի Խեղենիկն է, ապա այդ պարագային պիտի ընդունենք նաև այն, որ Արծրունի իշխանը կին էր վերցրել Շիրակի շրջանից Բագրատունի մի իշխանուհու, որով և մի ավելորդ անգամ հաստատվում է Արծրունիների և Բագրատունիների խնամիական հարաբերությունները։

Թովմա Արծրունու Պատմության շարունակողը 321 էջում հայտնում է, որ Խեղենիկը արու զավակ չի ունեցել, և իր Մարիամ անուն աղջկան ամուսնացրել էր իշխանական տոհմից Սեֆեդին արքայուն անունով մեկի հետ, որպես օժիտ տալով նրանց Աղթամարի կեսը, բայց իր ծերության և չքավորության օրերին՝ պարտավորվում է մյուս կեսն էլ վաճառել իր փեսա Սեֆեդինին։

Ժամանակագրությունը լռում է այն մասին, թե երբ է մեռել Խեղենիկ արքայունը, որի մահով էլ վերջանում է Արծրունի Խեղենիկյանների սերունդը։

1 Կ. Դոստանյանց, «Վիմական տարեգիրք», էջ 88։ Հմմտ. Ն. Ակինյան, «Գաւազանագիրք», էջ 38, «Շիրակ», էջ 32։

2 Ն. Ակինյանն այդպես էլ համարել է առանց որևէ վերապահության («Գաւազանագիրք», էջ 38)։

3 Ակինյանը հիմնվելով մի ձեռագիր հիշատակարանի վրա (տես «Գաւազանագիրք», էջ 36 և 37), Աղթամարի Ստեփանոս Ա կաթողիկոսին նույնացնում է Ստեփանոս-Ալուզի (Խեղենիկ-արքայունի հայր) հետ, որը որպես թե հետագայում ընդունելով կղերականություն, կաթողիկոս է դարձել իր եղբայր Դավիթ կաթողիկոսից հետո։ Ըստ իս, այս Ստեփանոսը Ալուզը չէ, այլ նրա 5 մեծ եղբայրներից մեկը, որ կղերական է եղել։ Եթե Ալուզը կաթողիկոս լիներ, նրա որդի Խեղենիկը չէր մոռանա այդ մասին հիշել արձանագրում։